

Հայկական տեղաշարժեր Արեւելեան Եւրոպայի փարսէսին վրայ

Յ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

1

Փառք տանք մեծ թուականներուն :

Մոռացութեան տայինք թերեւս մեր անցեալը առօրեայ մեր հոգերուն մէջ, ու անտեսէինք դէպքերն ու դէմքերը, որոնք պահուրտած են անցնող դարերուն ծոցը, եթէ ատեն ատեն մեզ Հյայտնուէր յանկարծ հին թուական մը եւ մեր ուշադրութիւնը չքաշէր իրեն :

Դարադարձերը, զորս հայ ժողովուրդը կը տօնէ ահա շուրջ վեց տասնեակ տարիներէ ի վեր, արդարեւ դիպուածին է որ կը պարտինք առաւելապէս : Եւ այնուամենայնիւ անոնք բարեդէպ առիթներ եղան որ հայ ժողովուրդը իր միտքը բերէ Տառերու Գիւտն ու Սուրբ Մեսրոպը, Մեղապարտ Յակոբն ու Նարեկացին, Սասունցի Դաւիթն ու Վարդանանքը, Մխիթար Հերացին ու Սայաթ Նոփան, ու շարանը երախտաւորներուն, որոնց ծննդեան ու մահուան թուականները օրացոյցներուն մէջ կ'որոնենք հիմա՝ որպէսզի զանոնք զուգադիպեցնենք հարիւրամեակներու :

Հայ գաղութներու պատմութիւնը ինք եւս իր մեծ թուականներն ունի՝ զորս նոյնպէս դիպուածն է որ կը յանձնէ յաճախ մեր ուշադրութեան, առանց սակայն քաջութիւն տալու մեզի որ տօներու վերածենք զանոնք : Մեր այդ անհամարձակութիւնը անոր համար նախ՝ որ մեր պատմութեան ամենէն խորթ մարզն է որ կը ներկայացնեն ցարդ մեր գաղութները, մարզ, ուր հայ ժողովուրդի ճակատագիրը իր ամենէն շահեկան պահերն ապրեցաւ սակայն, զանոնք ձուլելով այն մեծ եղելութեանց շարանին, որոնք ստեղծեցին այսօրուան մեր հայրենիքը :

Մեր դադուքներու լայնատարած քարտէսին վրայ իր ուրոյն տեղն ու դերը ունեցած է նաեւ Արեւելեան Եւրոպան, ուր հայ դադուքներու պատմութիւնը կը հաշուէ իր ամենէն ուշագրաւ բլիշներէն մէկ քանին, եւ որ մեր այս տարիներուն յորեկանական տարիներ կը յանձնէ նոյնպէս մեր ուշագրութեան:

Այդ թուականներէն ամենէն աշտմէականը մեր ներկայ տարին է, 1972ը, երբ ճիշդ երեք դար կը լրանայ Տրանսիլվանիոյ հայ դադուքին կաղմութենէն ի վեր Մոլդովայի հայութեան ծոցէն մեկնող կարաւաններով, որոնք պատերազմական դէպքերու ստեղծած անապահովութեան երեսէն կ'երթային Տրանսիլվանիոյ ապաստանի առժամեայ կերպով՝ այլեւս ցմիշտ մնալու համար սակայն հոն:

Հայկական Տրանսիլվանիոյ սոյն դարադարձը մեզ դրդեց ընդհանուր ակնարկ մը նետել այն կարեւոր տեղաշարժերուն վրայ, զորս կ'արձանագրեն Արեւելեան Եւրոպայի հայ դադուքներու տարեգրութիւնները: Առանց յաւակնութիւն ունենալու բացառիկ տուեալներ հայթայթել մեր պատմութեամբ զբաղողներուն, կը կարծենք այսուհանդերձ թարմացուցած ըլլալ պատմութեան յիշողութիւնը ինչ ինչ դէպքերու մասին, զորս կարելի չէ անջատել իր դարաւոր մատենանէն եւ որոնք պէտք է այդ մատենանին յանձնուին իրենց տրամաբանական շղթայով:

2

Արեւելեան Եւրոպայի քարտէսին վրայ տեղի ունեցած այս տեղաշարժերը կը բխէին նոյն այն շարժառիթներէն ինչ որ դրեթէ բոլոր դադութիւնը հայ պատմութեան ընթացքին: Իրաւ ալ՝ անոնց մէջ եւս դեր կատարեցին Հայոց ենթարկուած դժնդակ պայմանները արշաւանքներու եւ տնտեսական տաղնապնդներու ընթացքին, ինչպէս եւ իրենց կրած հալածանքներն ու բռնադադութիւնը համապատասխան շրջաններու մէջ:

Մեր սոյն ակնարկը կը սկսի մեր իսկ հազարամեակէն, այսինքն ճիշդ այն տարիներէն, երբ հայ ուրոյն դադթաշխարհի մը ներկայութիւնը Արեւելեան Եւրոպայի հողամասին վրայ՝ շօշափելի կը դառնայ պատմիչին համար: Հետեւաբար հոն տեղ չեն դրտներ հայ կորիզները, որոնք կազմուեր էին մերթ ընդ մերթ այս շրջաններուն զանազան կէտերուն վրայ, սկսեալ Բիւզանդական կայսրութեան օրերէն եւ տեւելու համար աւելի կամ նուազ երկար, որքան ալ անոնցմէ ոմանք զանդուածային բնոյթ կրեցին երբեմն:

Ինքնին կը հետեւի որ մեր ակնարկին մէջ տեղ պիտի գտնեն

այն հայ դաղթօճախները միայն, որոնք ծնան ու զարգացան կողք կողքի աւելի կամ նուազ սերտ կապեր պահելով մէկզմէկու հետ, եւ որոնք մեր օրերուն ալ հասան՝ ուրոյն բջիջներ կազմած, եւ հայ կեանք պահպանած այդ բջիջներուն շուրջ, ունենալով իրենց աղօթատեղիները եւ՝ թէեւ ժամանակի ընթացքին անոնցմէ ոմանք դաւանապէս պիտի անջատուէին իրարմէ:

Հակիրճ այս ակնարկին մէջ չեն մտներ հետեւաբար հայ պանդոսածները, զորս Բիւզանդիոնի կայսրերը բերին զետեղեցին իրենց արեւմտեան սահմաններուն վրայ, եւ անոնց կարգին հայ աղանդաւորները, որոնք մեծ խումբերով բերուեցան Պալլեանեան թերակղզիին մէջ: Չեն մտներ նոյնպէս վարպետներու եւ արհեստաւորներու կարաւանները, որոնք խումբ խումբ տարածուեցան այս շրջաններուն մէջ, Բիւզանդիոնէն անցնելով Սերպիա եւ այնտեղէն ալ Վալախիոյ երբեմնի հողը: Եւ վերջապէս պիտի չխօսինք հունգար հողի վրայ մատնանշուած հայ հին բջիջներուն մասին, ոչ միայն անոր համար որ անոնց մասին լրիւ տուեալներ չեն հասած մեզի, այլ որովհետեւ անոնք երկար կեանք ունեցած չեն տեւական դաղութ դառնալու համար:

3

Մեր ընդգրկած քարտէսը, իրականին մէջ, Ուրիմէն է որ պիտի սկսի՝ տարածուելով տակաւ դէպի այն ափերը, որոնք անկէ բխեցան, այսինքն Լեհաստան եւ Մոլդովա, անկէ ալ երկարելով դէպի Մունթենիա (Վալախիա) եւ Տրանսիլւանիա եւ անցնելով Դանուբի հանգիստակաց եղերքը եւ՝ Բուղարիա, շրջան, որ Ուրիմէն չի սերիւր թէեւ, լայց մաս կը կազմէ ինքն ալ Արեւելեան Եւրոպայի հայ դաղութներու խումբին, ոչ միայն իբրեւ անոնց պարզ հաւանք, այլ եւ իբրեւ տեսակ մը դարաւոր «խնամին» անոնց:

Չմոռնանք նաեւ որ շրջանները, որոնց վրայ մեր ակնարկը պիտի տարածուի՝ մաս կը կազմեն հայ եկեղեցւոյ պատմութեան ալ: Ի սկզբան անոնք թեմեր եղան հայ եկեղեցւոյ համար բոլորն ալ, ոմանք այդպիսին մնալով մինչեւ վերջ, ուրիշներ յափշտակուելով օտար եկեղեցիներէ այն չարաբաստիկ դարուն՝ որ ԺԷ-ն էր:

Դիտել տանք նաեւ որ այդ դաղութներէն ոմանք եթէ շարունակուեցան սերունդէ սերունդ եւ սպառեցան ժամանակին հետ՝ ինչպէս եղաւ պարագան Լեհաստանի, Մոլդովայի եւ Տրանսիլւանիոյ հայ դաղութներուն, ուրիշներ նորոգուեցան անընդհատ՝ միշտ դիմադիծ փոխելով, ինչպէս այդ պատահեցաւ Վալախիոյ եւ Բուլղարիոյ մէջ, որոնք աշխուժեցան որոշ պահերու:

Տարօրինակ թող չթուի եթէ Արեւելեան Եւրոպայի հայ դա-
ղութները, գրեթէ բոլորն ալ, իրենց ծագումը կը թուագրեն Անիէն
մեկնող կարաւաններէն:

Շատ ալ չարհամարենք աւանդութիւնները, որոնց կը կըրթ-
նին անոնք, որքան ալ պատմական տուեալները շատ ժլատ ըլլան
այդ կարաւաններուն ճամբան ճշդելու համար:

Ինչ որ ստոյգ է այն փաստն է թէ Անին «կործանիլ» սկսաւ
ԺԱ. դարու կէսերուն, ու մահացաւ երկար հոգեւարքէ մը ետք, որ
չուրջ երկու դար տեւեց:

Բիւզանդիոնէն ստացեր էր ան դաւադիր առաջին հարուածը՝
1045 թ.ին:

Յետոյ՝ Սելճուքները եկեր էին լրացնել աղէտը 1048-1054
տարիներու միջեւ, իրենց կատարած յաջորդական արշաւանքներով:

Ի վերջոյ, իր գոյութիւնը քարշ տալէ ետք այս կամ այն չա-
փով երկու ամբողջ դար՝ Անին դիտապաստ կ'իյնար Մոնղոլներու
հարուածին ներքեւ 1236 թ.էն սկսեալ:

Արշաւանքներու կէս թողուցածը բնութեան աղէտներն ըրին:
Երկրաշարժներն ալ արդարեւ դեր խաղացած են Անիի ճակատագրին
մէջ:

Անին տարտղնեցաւ անշուշտ ամէն ուղղութեամբ:

Առաջին հարուածներուն տակ խուճապահար բազմութիւննե-
րը բնականաբար ապաստան որոնեցին մօտակայ վայրեր: Անոնցմէ
զանգուած մը, օրինակ, զնաց զետեղուիլ Պարսկաստան:

Վերջին հարուածը աւելի հեռունները քշեց Անիի կարաւաննե-
րը, անոնցմէ կարեւոր մաս մը հասցնելով Ասորախան:

Տեղացի տարրերուն հետ անոնք չկրցան սակայն հաշտ ապ-
րիլ երկար, եւ ապաստան գացին փնտռել այլուր:

Խրիմն էր որ իր դռները բացաւ այն ատեն անոնց, ԺԴ. դա-
րու մուտքին:

Այնպէս որ 1299 տարին երկու դէպք կ'արձանագրէր հայ ժո-
ղովուրդի ճակատագրին մէջ: Այդ տարին էր նախ որ սկիզբ կ'առ-
նէր Օսմանեան կայսրութիւնը եւ իր տիրապետութիւնը բազմաթիւ
ժողովուրդներու վրայ, տառապանքի եւ մարտիրոսութեան դարա-
ւոր շրջան մը բանալով բոլորին համար:

Ու ճիշդ նոյն տարին էր որ Խրիմ կու գար զետեղուիլ հայե-
րու մեծ զանգուած մը, որ բնիկներէն նեղուելով մեկներ էր Ասորա-
խանէն:

Միակ աղբիւրը որ մեզ կը պատմէ Անիի կատարած սոյն ու-

դեւորութիւնը Աստրախանէն դէպի Սրբիմ, յիշատակարանն է Կաֆ-
ֆա գրուած եւ հետագային Նախիջեւան փոխադրուած Յայսմաուր-
քի մը, զոր տեսած է Հ. Մինաս Բժշկեան, եւ որուն արձանագրած
տեղեկութեանց համաձայն, մինչ Անիի մնացորդներէն խումբեր
դէպի Ջուղա, Վան կամ Սիս կը դիմէին, ուրիշ զանգուած մը զնաց
հաստատուիլ Աքսերայ, Հաշտարխանի եւ Ղաղանի միջեւ, այնտեղ
ապրելու համար մինչեւ 1299 տարին: Այդ թուականին է որ, նեղ-
ուելով թաթարներէն, պատուիրակներ ղրկեցին Սրբիմ, Թէոդոսիա-
յի Ֆրանկ-Հիսար վայրին մէջ բնակող ճենովացի իշխանին, եւ ա-
նոր հետ համաձայնեցան դալ տեղափոխուելու համար Սրբիմ, ու
մէկ կողմէ կոուելով թաթարներուն հետ՝ եկան հաստատուիլ Թէո-
դոսիա (Կաֆֆա), Ղաղարաթ, Սուրխաթ (Սուկաթ) եւ անոնց շրջա-
կանները, տեղափոխութիւն, որ մինչեւ 1330 թ. տեւեց: Յիշատակա-
րանը կը պատմէ յետոյ թաթարներուն արշաւանքները դէպի Սրբիմ,
անոնց համակեցութիւնը ճենովացիներուն հետ մինչեւ 1468 տարին,
եւ ի վերջոյ Սրբիմի գրաւումը Թուրքերուն կողմէ 1475 թ.ին(1):

5

Երբոր Հայերը Սրբիմ կ'իջնէին այդպէս խուճապով՝ ուրիշ ա-
փեր ալ ճամբայ ելլողներ անշուշտ որ եղան նոյն Աստրախանէն: Ա-
նոնց տարածման ուղին մեղի լրիւ ծանօթ չէ սակայն, որքան ալ
աղբիւրներու մէջ հայ հետքերու կը հանդիպինք տեղ տեղ Արեւել-
եան Եւրոպայի զանազան կէտերուն վրայ ԺԴ. դարէն ալ առաջ:
Այնուամենայնիւ զանդուածային բնոյթ պէտք չէ որ կրած ըլլայ
հայ հետքերու պտոյտը նախ քան այդ դարը:

Արեւելեան Եւրոպան, իրականին մէջ, Սրբիմէն է որ ծագում
կ'առնէ, գաղութէ մը, որուն դարաւոր կեանքը չքեղ հանգրուան
մըն է՝ ոչ միայն այդ կեանքին յաջորդական դրուագներուն մէջ,
այլ իր բերած նպաստովը բազմաթիւ գաղութներու: Հայ հողէն
հեռու ան ինքզինք վերածեր է փոքրիկ Հայաստանի մը, որ Կիլի-
կիոյ աւանդութիւնները շարունակեց Կիլիկիայէն ետք եւ նոյնիսկ
անոր կենդանութեանը, եւ որուն ի զուր չէր որ պատշաճ տեսեր էին
«Ծովային Հայաստան» (Armenia Maritima) մականորը(2):

1) Հայր Մինաս Բժշկեան, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան եւ յայն
կողմանս բնակեալ ի Հայկազանց սերելոց ի նախնեաց Անի քաղաքին, Վեմնութիկ,
1830, էջ 336:

2) Heyde, *Histoire du Commerce du Levant*, II, p. 172.

Արեւելեան Եւրոպան այլապէս ալ չատ բան կը պարտի Ուրիմին: Նախ հոն էր որ մարզեց ան իր առեւտրական ձիւղերը: Ճենովան եղաւ անդրանիկ դաստիարակը առեւտրական իր կարաւաններուն, որոնք Արեւմուտքը Արեւելքի պիտի կապէին շուտով:

Անկէ ստացաւ շատ բան իր հոգեկան ընդունակութիւններէն ալ: Ուրիմը իր փառքի դարերուն եղեր էր մշակոյթի օճախ մը, ու իր հայաբնակ քաղաքներէն շատերը, ինչպէս Կաֆֆա եւ Սուրխաթ, վերածուեր էին լոյսի վառարաններու՝ ուրկէ աւել պիտի ծծէր Արեւելեան Եւրոպան եւս:

Անկէ քաղեց վերջապէս բոլոր կարելի տարրերը սեփական բարբառի մը համար: Եթէ Արեւելեան Եւրոպայի հայոց բարբառը հանդիսացաւ հայ բարբառաւորութեան ուրոյն մէկ ճիւղը՝ իր առաջին օրօրոցը Ուրիմն էր եղեր:

Ո՞րն է սակայն առաջինը հայ կորիզներէն, որ մարմին առաւ եւրոպական ափի վրայ: Դժբախտաբար կը շարունակէ միշտ անլոյծ մնալ այն աւանդութիւնը թէ Հայերը առաջին անգամ երեւցած են Քիւեւ, նոյնիսկ Աստրախան խուժելէ առաջ:

Մեր բանասիրութեան մէջ յեղյեղուած աւանդութեան մը համաձայն Քիւեւի իշխանները Հայերը օգնութեան կանչած են իրենց 1019 թ.ին՝ Բորիսլավ Քալի դէմ իրենց մղած պայքարին առթիւ(3), մինչ ուրիշ աւանդութիւն մը կ'ըսէ թէ Քիւեւի մեծ իշխան Թէոդոր Դիմիթրեւիչ 1062 թ.ին դիմած է Հայերուն որպէսզի դան իրեն օգնեն լեհացիներու դէմ եւ փոխարէն՝ ազատութիւններ խոստացած է անոնց(4):

Որքան ալ սոյն աւանդութիւնները դժուար եղած է կապել պատմական փաստերու, ստուգուած է այսուամենայնիւ որ ուքրայնական հողը անձանօթ չէր մեր նախահայրերուն: Յիշատակուած է, օրինակ, 1251 թ.էն առաջ զրուած Հարանց վարքի մը մէջ, հայերու ներկայութիւնը Քիւեւ, իսկ Ալոյիս Պիդու կաթողիկ միսիոնարը Ժէ. դարու երկրորդ կէսին հայ եկեղեցի եւ նոյն իսկ հայ եպիսկոպոս կը յիշատակէ հոն(5): Մեր բանասէրներէն ոմանք մեկ-

3) Հ. Քերովիւ Քուշներեան, Պատմութիւն Գաղթականութեան Ուրիմու Հայոց, Վեմսիկ, 1895, էջ 187:

4) Բժշկեան, անդ, էջ 84-85: Ստեփանոս Գիւլիեր Ազնոց. Աշխարհադրութիւն չորեք մասանց աշխարհի, Բ. մաս, հատոր Բ., Վեմսիկ, 1802, էջ 93: Թ. Զաւրեան, «Հայրենիք Ամսագիր», Է. տարի, քիւ 5, էջ 78:

5) Լեւոն Խաչիկեան, Հայկական Գաղթաւայրերը Ուկրաինայում 16-17 դդ. «Տեղեկագիր Հ. Ս. Ս. Հ. Գիտութիւնների Ակադեմիայի», 1954, քիւ 4, էջ 47:

ներով այն փաստէն թէ արեւելեան աղբիւրներու մէջ Մանքերման անունով մէկէ աւելի վայրեր կը յիշուին, մղուած են այն ենթադրութեան թէ Քիւելին է որ պէտք է ակնարկած ըլլայ Մանքերման վայրը(6), որ կը յիշատակուի Թէոդորոս կաթողիկոսի 1388 թ.ի Օդոստոսի 18 թուակիր կոնդակին մէջ, Յովհաննէս եպիսկոպոսի իրաւասութեան ենթարկուած միւս հայ համայնքներու կարգին, որոնք Լճովը, Սիրաթը, Զիչովը, Կամենեցը, Լուցկան, Ալլադէմուրը, Վլախաց երկիրը, Պոլինն ու Ընկիսալան էին(7): Նոյն այդ Մանքերմանը Աքքերմանի հետ եւս նոյնացնողներ կան(8):

Երկար ատեն վէճերու տեղի տուաւ այն հարցումը եւս թէ Խրիմէն առաջին անգամ ո՞ւր են անցած Հայերը եւ ե՞րբ: Առհասարակ ԺԴ. դարն է որ ցոյց կը տրուի իրրեւ հայ կորիզներու ստեղծման թուականը Արեւելեան Եւրոպայի մէջ(9): Այդ ճիշդ է՝ եթէ հայ համայնքներու վերջնական ստեղծումը նկատի ունենանք այդ շրջանին մէջ: Բայց նոյնքան ճիշդ է որ այդ դարէն առաջ եւս հայ հետքեր կը մատնանշուին այդ վայրերուն մէջ ինչպէս որ ըսինք(10): Հետքեր, որոնց մի առ մի թւումը մեզ պիտի տանէր շատ հեռունքը:

Պահ մը այն կարծիքը տիրեց թէ Լեհաստանէն եկած են հայերը կորիզ կազմելու համար Մուղովայի մէջ, եւ այդ կարծիքը նոյն իսկ պատմական երկերու մէջ տեղ զտաւ(11): Հիմա սակայն այլեւս բնորոշուած է այն տեսակէտը թէ երկու դաղութներն ալ մարմին առած են զրեթէ միաժամանակ, եթէ երբեք աւելի առաջ չէ կազմուած Մուղովան(12):

Արդարեւ 1350 թ.ը, զոր աղբիւրները(13) ցոյց կու տան իբր Պոթոլանի հայ եկեղեցւոյ շինութեան տարին՝ երկու ենթադրու-

6) Լեւոն Խաչիկեան, Նոր նիւթեր Կիւի հայկական հին դաղութի մասին, «Խարսթիչիսիէ սվմազի...», էջ 110-120 (ռուս.):

7) Հ. Ղեւոնդ Ալիշան, Կամենեց, Տարեգիրք Հայոց Լեհաստանի եւ Ռուսմանիոյ, Վիեննայի, 1896, էջ 9:

8) Ալիշան, անդ, էջ 4: Ա. Գ. Արքահամեան, Համառոտ Ուրուագիծ Հայ Գաթաւայրերի Պատմութեան, հատոր Ա., Երեւան, 1964, էջ 335:

9) Բժշկեան, անդ, էջ 86:

10) Բժշկեան, անդ, էջ 85, 104: Ի. Պ. Կրիպյովիչ, Լճովի Հայ Գաղութի Աղբիւրման Հարցի Շուրջ, «Պատմա-քաղաքական Հանդէս», 1963, քիւ 1, էջ 164 (ռուս.):

11) N. Iorga, *Patru Conferinti*, 1929, p. 90-91.

12) Նայմը:

13) Բժշկեան, անդ, էջ 209:

թիւն հիմնիվայր կ'ընէր մէկէն: Հաստատելով հայ համայնքի մը ներկայութիւնը Մոլդովայի այդ քաղաքին մէջ յիշեալ թուականէն առաջ՝ ան հերքեց, առաջին հերթին, այն կարծիքը թէ Մոլդովայի հայերը սերած են Լեհաստանի գաղութէն, երբ այդ դարու կէսերուն այս գաղութը դեռ ինքը չկար:

Միւս վարկածը, զոր նոյն այդ թուականը կու գար ջրել՝ յաճախ յեղյեղուած այն կարծիքն էր թէ հայերը Մոլդովա հրաւիրուեցան տեղւոյն իշխաններուն կողմէ: Պոթոլանի հայ եկեղեցին փաստ մըն էր ինքնին որ հայեր վաղուց ներկայ էին Մոլդովայի մէջ երբ Դրագոշ-Վոդա 1352 թ.ին հիմը կը դնէր Մոլդովական իշխանապետութեան: Շատ իրաւացի էր Նիքոլա Շորկան երբոր կը պնդէր թէ իբրեւ հիւրեր չեկան հայերը դէպի Մոլդովա, այլ իրենք իսկ մաս առին իշխանապետութեան ստեղծման մէջ(14):

Աւելցնենք որ պարագան տարբեր չի ներկայանար նաեւ Լվովի համար: Այնտեղ հայեր յիշուած են նախ քան 1356 տարին, երբ Մեծն Կաղիմիր նոր կը սարքէր հոն իր իշխանութիւնը(15):

Երկու գաղթածականներ քով քովի մարմին կ'առնէին այսպէս միեւնոյն դարուն իրարմէ անկախ, երկուքն ալ նոյն թրիմէն բխելով:

Չանգուածային առաջին տեղաշարժն էր որ տեղի կ'ունենար դէպի եւրոպական ափ, եթէ Արեւելեան Եւրոպայի տեղաշարժերու շարքին մէջ չնեմուծենք նաեւ Հայոց խուժումը դէպի թրիմ ատկէ շուրջ կէս դար առաջ:

6

Սխալ չէ ըսուած թէ առեւտուրի հայ կարաւաններն էին որ աշխարհէ աշխարհ իրենց դեղերումներուն միջոցին հայկական կուրիզներ կը ստեղծէին իրենց ճամբուն վրայ: Եւրոպան Ասիոյ կապող առեւտրական մեծ ճանապարհները՝ որոնք երկար ատեն Լեհաստանի, Մոլդովայի եւ Վալախիոյ մէջէն կ'անցնէին՝ ծանօթ էին հայ կարաւաններուն, որոնց ամէն մէկ կանգաւոր իրենց ճամբուն

14) N. Iorga, *Choses d'Art Arméniennes en Roumanie*, 1935, p. 6.

N. Iorga, *Patru Conferinti*, p. 90. N. Iorga, *Sur l'Origine des Arméniens de Roumanie*, «Համադէս Ամսօրեայ», 1927, էջ 907-910:

15) Թ. Զաւրեան, «Հայրենիք ամսագիր», է. տարի, քիւ 5, էջ 76-78: Արշակ Ալլոյումեան, Պատմութիւն Հայ Գաղթականութեան, Բ. հտք., Գաիքի: 1955, էջ 381-382:

վրայ տօնավաճառներ կը ստեղծէր իսկոյն: Անոնք ստիպուած էին ըստ այդ կէտերուն մնալուն հանգրուաններ պահել, որոնք չէնցան ժամանակին հետ: Տօնավաճառները, այդպէսով, քաղաքներու կը վերածուէին տակաւ, ու հայկական կայքերը կը դառնային կորիզը համայնքներու, որոնց ծոցին մէջ աղօթատեղիներ ալ մարմին կ'առնէին երթալով ու անոնց շուրջ՝ հայ կեանք:

Ռուսէն կարկառուն պատմաբաններ, ինչպէս Պոկտան Հաթտէու(16), Քսենոփոլ(17), Եորկա(18), Փանայիթէսըու(19), զբաղած են այդ կարաւաններով եւ անոնց կատարած բացառիկ դերով Արեւելեան Եւրոպայի անտեսական յարաբերութեանց մէջ Արեւմտեքի ու Արեւելքի միջեւ, դեր, որ բացառիկ էր ոչ միայն իր իրադրածած նպաստով — ապրանքներու փոխանակութիւնը ընդմէջ երկու հեռուոր աշխարհներու — այլ եւ այն դժուարութիւններով, որոնց կոչուած էր յաղթել: Եթէ առեւտուրը երկրէ երկիր՝ արկածախնդրութիւն մըն էր այն օրերուն, հայ կարաւանները զայն դժմազրաւելու ձիրքը ունէին: Եթէ այլադան երկիրներ ման եկող այդ կարաւաններէն կը պահանջուէր ծանօթութիւն խայտաբղէտ բարքերու եւ լեզուներու՝ Հայերը այդ ասպարէզին մէջ ալ մրցորդ չունէին: Վկայ՝ բախումները զորս կ'ունենային իրենց ճամբուն վրայ ասպատակներու հետ, ինչ որ կը ստիպէր զանոնք բազմաթիւ խումբերու շարանով մը անցնիլ տեղէ տեղ: Վկայ՝ ներկայութիւնը կարաւաններուն մէջ այլադան լեզուներու տեղեակ մարդոց, որոնք սուրհանդակի, նոյնիսկ դիւանագիտական գործակալի դեր ալ կը կատարէին այս կամ այն պետութեան համար(20):

Արդ, հայկական այդ կարաւաններուն կը վերադրուի առաջին քաղաքներուն կազմութիւնը Մուլդովայի մէջ: Շատ է գրուած Մուլդովայի այն եօթը քաղաքներուն մասին, որոնք իրենց կազմաւորումը կը պարտին առեւտուրի այդ հայ կարաւաններուն, որպէսզի կարիք ըլլար անդամ մը եւս անդրադառնալ մանրամասնութեանց: Որքան ալ տարբեր հեղինակներ տարբեր կերպով կը կազմեն եօթը քաղաքներու այդ ցանկը, բոլորն ալ այդ ցանկին մէջ կը

16) B. P. Hasten, « Arhiva Istorică », 1865, I, p. 131.

17) A. D. Xenopol, *Istoria Românilor*, II, p. 251.

18) N. Iorga, *Une Parallèle Historique*, dans le « Bulletin de la Section Historique de l'Académie Roumaine », 1913, p. 233.

19) Փ. Փ. Փաթալիքչիֆու, *Լեւ հանապարհորդներ ռուսէն երկիրներու մէջ*, 1930, էջ 6-7 (ռուս.) :

20) Wladyslaw Lozinski, *Patrycyot i Mieszanstwo Lwowskie w XVI i XVII wieku*, 1912, Lwow, p. 265-306.

գետեղեն անվրէպ Սուչավան, Եաղը, Պոթոշանը, Վասուլը եւ Ռոմանը, հինգ քաղաքներ, որոնց վրայ կրթնցուց Մուղուվան իր բարդաւածութիւնը(21) :

Մուղուվայի առաջին իշխանները՝ Հայեր ունեցեր էին իրենց երկրին մէջ՝ պետութիւն ստեղծած ատեն: Իրենց յաջորդները աւելի հոծ թիւով Հայերու կարիք ունեցան բարձր դարձնելու համար իրենց երկիրը: Այս անգամ արդէն անոնք Հայեր կանչեցին հարեւան Լեհաստանէն ալ: Ռումէն ժողովուրդի պատմութիւնը յակնդէսէ կը յիշէ այդ իշխանները՝ չղանալով մանրամասնութիւններ ալ:

Այսպէս՝ ան կը յիշատակէ Ալեքսանդրու Բարի իշխանը, որ ոչ միայն հայ եպիսկոպոսութիւն մը հաստատեց իր մայրաքաղաքին՝ Սուչավայի մէջ 1401 թ.ին(22), այլ քանի մը տարի յետոյ, 1407 թ.ին, Լեհաստանէն Հայեր հրաւիրեց Մուղուվա՝ առանձնաշնորհումներ ալ տալով անոնց(23), իսկ 1418 թ.ին 3000 հայ ընտանիքներ գետեղեց Մուղուվայի 7 քաղաքներուն մէջ(24) :

Հետագային ռումէն ուրիշ իշխաններ եւս, ինչպէս Փեթրու (1451-7 թթ.), Շթեֆան Մեծ (1457-1504 թթ.), Պոկտան Գ. (1504-1517 թթ.) եւ Փեթրու Ռառեշ (1527-1538 եւ 1541-1546 թթ.), նորանոր արտօնութիւններով պիտի քաջալերէին Հայերու դադիւր դէպի Մուղուվա(25) :

Ամէն պարագայի մէջ զանգուածային նոր թափանցման մը կերպարանքն առին հայ կարաւաններու ստեղծած կորիզները հարեւան զոյգ երկիրներու մէջ, տեսակ մը տեղաշարժ գծելով Արեւելեան Եւրոպայի Հայոց քարտէսին վրայ:

21) Engel, *Geschichte der ungarischen Reiche*, 1801, Halle, IV, 2, p. 108.

A. D. Xenopol, *Istoria Românilor*, II, Iazi, p. 251.

B. P. Hasden, *Etymologicum Magnum Romaniae*, II, p. 1697.

Papadopol-Callimache, Նօթ մը Պոթոշան քաղաքի մասին, 1887, էջ

10 (նում):

G. Pray, *Dissertationes historico-criticae*, Vindaborne, 1775, cap. XI, p. 170.

Luigi Maria Pidou, *Breve relazione...*, (N. Iorga, *Studii si documente*, I-II, p. 439).

22) Փ. Փ. Փաճայիթ-Էֆու, Ալեքսանդր Բարի իշխանին Հրովարտակը Սուչավայի Հայ եպիսկոպոսութեան համար, 1935, էջ 4-5 (նում):

23) Kaendl, *Geschichte der Bukowina*, II, p. 95.

24) G. Pray, *Ibid*, p. 170.

25) Wichenhauser, *Moldowa*, Wien, 1862, p. 68.

7

Թուրքին մուտքը պատմութեան թատերաբեմէն ներս՝ ինչպէս ըսինք՝ բացառապէս ճակատագրական պիտի ըլլար հայ ժողովուրդին համար, սկսեալ նոյնինքն Օսմանէն, որ հիմնադիրը հանդիսացեր էր նոր կայսրութեան: Ան եւ իր յաջորդները, իրենց յաղթական արշաւին ատեն դէպի Եւրոպայի դռները, կը կոխոտէին սողեր ու ցեղեր, զանոնք քշելով յաճախ իրենց առջեւէն: Հայն ալ տեղահան կ'ըլլար շէնցնելու համար դրաւուած նոր երկիրները, ու կենդանութիւն պարգեւելու համար կայսրութեան առաջին մայրաքաղաքներուն, որոնք Պրուսան եւ Էտրինէն էին եղեր:

Բայց Ֆաթիհ Սուլթան Մէհմէտն էր որ պիտի կատարէր ամենէն վճռական դերը, ինչպէս ուրիշ ազդերու եւ երկիրներու՝ նոյնպէս հայ ժողովուրդի ճակատագրին մէջ: Ան իր կայսրութեան նոր մայրաքաղաքը շէնցնելու համար Հայերու եւս կարիք ունեցեր էր: Պատմութեամբ զբաղողներուն ծանօթ են իր փորձերը յոյն տարրին կողքին՝ Հայեր եւս ղետեղելու համար իր փայտախթին մէջ, փորձեր, որոնց յիշատակութեան լայն տեղ տուինք «Պոլսոյ եւ իր դեր»ին նուիրուած մեր հատորներուն ընթացքին(26): Այստեղ նօթենք այսքանը որ եթէ Ֆաթիհ Սուլթանին ահաւոր մուտքը Պոլիս՝ «արսափի մատնեց ճենովական ափի վրայ տուն-տեղ եղած Հայերը եւ անոնցմէ մաս մը ապաստան դնաց փնտուել հիւսիս՝ դէպի Դանուբի ափերը, փոխարէն իր կայսրութեան ուրիշ վայրերէն ան հայեր տեղափոխեց Պոլիս: Այդ օրերէն կը թուագրուին «Օխտը Օտաւար»ները, որոնք Պոլսոյ առաջին հայ թաղերն եղան, թաղեր որ «ալթը ճէմաթ» անունով եւս յիշատակուած են(27):

26) Հայկ Պէրպէրեան, «Համդէս Ամսօրեայ», 1962, էջ 413:

27) Հ. Ղուկաս Ինքիմեան, Աշխարհագրութիւն Զորեց Մասանց Աշխարհի, Մասն Բ., հատոր Զ., Վեներտիկ, 1804, էջ 115-116:

Մաղաֆիա Արք. Օրմանեան, Ազգապատում, Բ., էջ 2154:

Արշակ Ալպոյանեան, Երեք դարու պատմութիւն Պալարու Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ, 1931, էջ 115-116:

Հրամտ Ասատուր, Ընդարձակ օրացոյց Ազգ. Հիւանդանոցի, 1901, էջ 81-82:

Գ. Հմատէր, «Բագմավէպ», 1928, էջ 210:

Գ. Ալաւեան, «Շաղակաք», 1954, էջ 70-71, 92:

Իսկ ՆՐԻՄԻ գրառումը 1475 թ.ի Ֆաթիհի զորքերուն կողմէ՝ տուիթ տուաւ սարքելու մին այն ահաւոր բռնազաղթերէն, որոնց ենթակայ եղած են Հայերը իրենց պատմութեան ընթացքին ի փառս մեծ նուաճողներու: Ժամանակակից աղբիւրներ զարհուրելի գոյնեւորով կը ներկայացնեն պարագաները, որոնց մէջ տեղահան եղան ՆՐԻՄԻ Հայերը Պոլիս բերուելու համար բռնի եւ չէնցնելու համար Օսմանեան Կայսրութեան նոր մայրաքաղաքը(28):

Արեւելեան Եւրոպայի Հայերը տաղնապի պիտի մատնուէին Ֆաթիհի յաջորդին՝ Բայազիդ Բ.ի օրով ալ: Բայազիդ ինք եւս կանգ պիտի չառնէր իր նախորդին աշխարհակալութեան մոլուցքին մէջ, եւ երբ 1484 թ.ին կը գրաւէր Քիլիկիան ու Աքքերմանը՝ այդ քաղաքներէն Հայեր պիտի տեղափոխէր այլուր, անոնցմէ մաս մը հասցնելով մինչեւ իր մայրաքաղաքը(29):

Օսմանեան երկու սուլթանները Արեւելեան Հայոց քարտէսին վրայ կ'արձանագրէին այսպէս երկու նոր տեղաշարժեր, անչքացնելով երկու հայ չէն օճախներ՝ որոնք Կաֆան ու Աքքերմանն էին եղեր:

Յ. Ճ. Սիբուսի, Պոլիս եւ իր դերը, Ա., 1965, էջ 195-206:

Էվլիա Ջելլալի, Սէյահաթնամէ, Ա., էջ 128:

Օսման Էրգիմ, «Բէսիսիլի քարիի մէմնասը», 1948, քիւ 4, էջ 2352-2366:

28) Գրիգոր Վ. Դաբաճաղցի, Ժամանակագրութիւն, Երևան, 1915, էջ 12 եւ 125:

Բժշկեան, անդ, էջ 339-340:

Յ. Քիւրտեան, Ողբ մայրաքաղաքին Կաֆայու, «Բազմալեպ», 1957 Մարտ-Ապրիլ:

Հ. Գրիգորիս Գալեմֆեաքեան, «Համդէս Ամսօրեայ», 1911, էջ 79-90, 144-149, 449-497:

Գրիգոր Մարգարեան, «Ժամանակ», 1911, քիւ 753, 757, 761, 763, 765:

Արշակ Ալոյսիանեան, «Բիւզանդիոն», 1911, քիւ 401-404, 408-409, 412-415, 417-418, 420-421, 424-425:

Հայկ Պէրպէրեան, «Համդէս Ամսօրեայ», 1962, էջ 412-413:

Օրմանեան, Աղգապատում, Բ., էջ 2185:

Հրաչեայ Աճառեան, Քննութիւն Պոլսահայ Բարբառի, 1941, էջ 24:

Լեւոն Խաչիկեան, Ժե. զարբի Հայերէն ձեռագրերի յիշատակաբաններ, Երևան, 1958, էջ 389:

29) Գեորգիս Սփանցիս, Քրոնիկոն, Պոն, 1838, էջ 308:

Սիմէոն Լեհացի, Ուղեգրութիւն, էջ 348:

8

ԺԶ. դարը ուշագորաւ տեղաշարժեր ցոյց չի տար Արեւելեան Եւրոպայի հայ քարտէսին վրայ: Երկիրները, ուր զետեղուած էին հայերը՝ այդ դարուն ենթակայ չեղան բացառիկ վերիվայրումներու, զանոնք եւս չիօթութեան մատնելու համար:

1549 թ.ին դաղթականութիւն մը կը յիշուի միայն, որ Նախիջևանէն, Շոուքէն եւ Կարբիէն կու գայ դէպի Բուլղարիա, զետեղուելու համար Շումէնի շրջանին մէջ(30):

Ճիշդ է որ մեծ տաղնապներէ յետոյ խուճապի կը մատնուին Ժողովուրդները: Այդպէս չեղաւ սակայն 1551 թ.ին Մուղովայի մէջ:

Այդ տարին էր որ Ռումանիոյ հայ դաղութի պատմութիւնը կրօնական անհանդուրժողութեան միակ դէպքը արձանագրեր էր: Հոգեկան հաւասարակշռութենէ զուրկ իշխան մը, Շթեֆան Ռաուել, զոր սեւ զիծերու մէջ կը ներկայացնէ ռումէն Ժողովուրդի պատմութիւնը ինքն իսկ, հայերու դէմ հալածանք հանեց զանոնք ուղղափառ դարձնելու պատրուակին տակ՝ բայց առաւելապէս աւարի տայու համար հայ եկեղեցիներն ու հայ ունեւորները, հալածանք, զոր այնքան կենդանի դոյներով կը պատմէ ակնատես հայ տաղասացը, Մինաս Թոթաթեցի: Ճիշդ է որ նախճիրներու ենթարկուեցաւ հայ տարրն այդ առթիւ և քանդուեցան Սուշավայի, Եաշի, Պոթոշանի, Ռոմանի, Վասուլյի, Սիրէթի եւ Հոթինի հայ եկեղեցիները, սակայն կարճ տեւեց Հայոց խուճապը, որովհետեւ մոլեգնած իշխանը ինքն իսկ սպաննուեցաւ տարի մը յետոյ իր իսկ պոյներէն, եւ հայերը ուրիշ հոգ չունեցան բայց եթէ վերականգնել իրենց վնասուած տնտեսութիւնները, վերաշինել իրենց քանդուած եկեղեցիները եւ սպասել նոր աղէտներու, որոնք պիտի չուշանային(31):

9

Պահեր եղած են մեր անցեալին մէջ՝ երբ ճակատագիրը բացառապէս անողորմ հանդիսացած է հանդէպ հայ Ժողովուրդին:

30) Բուլղարիոյ զանազան քաղաքներու մէջ հայերու զետեղման մասին տեսնել Ներսէս Գասապեանի, Արա Մարկոսի, Սարգիս Փաշաճեանի եւ Յ. Քիրստեանի յօդուածները «Էջմիածին»-ի, Սօփիայի «Երեսմեքիմ» եւ այլ պարբերականներու կամ տարեգիրքերու մէջ (Մասիս, Վերածնունդ, Հայրենի Տարեցոյց, Խայլմ):

31) Մինաս Թոթաթեցի, Ողբ ի վերայ Օլախաց երկրի հայերուն (Հ. Ներսէս Ակիմեան, Հինգ պանդուխտ տաղասացներ, 1921, էջ 85-114):

Զայն զգետնած է մէկէ աւելի հարուածներու տակ: Այդ պահերէն մէկը Հայուն վիճակեցաւ Ժէ. դարու մուտքին:

Ժէ. դարը աղէտներով բացուեցաւ արդարեւ հայ ժողովուրդին համար: Երեք մեծ պատուհասներ, ետեւէ ետեւ, անդամ մը եւ տարաղենցին զայն, եւ խառնակեցին Արեւելեան Եւրոպայի հայոց քարտէսը եւս:

Առաջինը այդ պատուհասներէն, ձեւալիններու խլրտումներն էին, որոնք, 1598 թ.ին ելած եւրոպական արիւնքէն, տարածուեցան բովանդակ Փոքր Ասիոյ մէջ, իրենց սարսափներուն ենթարկելով Հայրն ալ(32):

32) Դարիժեցի, *անդ.*, էջ 79-82, 145:

Դարամաղցի, *անդ.*, էջ 13-14, 24-27, 37-38:

Ստեփանոս Թոխաբեցի (Հինդ պանդուխտ տաղասացներ), էջ 122:

Ղազար Թոխաբեցի (*անդ.*, էջ 215):

Յակոբ Թոխաբեցի (*անդ.*, էջ 173):

Ալիշամ, Հայապատում, 1901, Գ., էջ 315-322, 608-610:

Ագաբիս Սասնեցի (Հ. Ներսէս Ակիմեան, «Համդէս Ամսօրեայ», էջ 325-337):

Երեմիա Զելեղի Քիւմիւրեան (Պատմութիւն Համառոտ 400 տարւոյ օտանցւոց Թաղաւորացն, ձեռագիր Մատենադարան Բիւ 1675, քղբ. 83-99):

Օրմանեան, Ազգապատում, Բ., էջ 2305-2307:

Զամչեան, Հայոց պատմութիւն, Գ., էջ 556-561:

Սիմէոն Լեւոնցի, Ուղեգրութիւն (տպ. Հ. Ներսէս Ակիմեան, 1936, էջ 188-189):

Հ. Գաբրիէլ Այվազովսկի, Օտմանեան պատմութիւն, Ա., էջ 482:

Քիաբիպ Զելեղի, Ֆէղլէֆէ, էջ 143 (քրք.):

Նայիմա, Երկեր, Ա., Գ. տիպ, էջ 237-238 (քրք.):

Ամատեալը Ազտի Զատէ Հիւսէիմ Հիւսամէտտիմ, Ամասիա Թարիհի, 1927, էջ 341 (քրք.):

Շէմսէտտիմ Սամի, Քամուս իւլ Ալամ, Գ., 1891, էջ 1827 (քրք.):

Ա. Ս. Տվերիտիմովա, Ապստամբութիւն Քարա Նաղըճը Տէլի Հասսեի, Մոսկուա, 1946, էջ 340 (ռուս.):

Լէօ, Հայոց պատմութիւն, Գ., 1946, էջ 229-236:

Թ. Ճ. Սիրումի, ձեւալիններու շարժման ընկերային եւ քաղաքային երեւոյթները հայ աղբիւրներու (ռուս.):

Ն. Մովսիսեան, Զաւալիք կամ ձեւալիններ, «Սիռն», 1958, էջ 152-156:

Արշակ Ալոյոյանեան, Պատմութիւն Հայ Կեսարիոյ, Բ., էջ 594-600:

Թ. Ս. Ամատեան, XVII դարի ազատագրական շարժումներն Արեւմտեան Հայաստանում, 1961, էջ 21-27:

Երկրորդ աղէտը Շահ Աբբասի արշաւանքն էր 1604 թ.ին։ Ան առաւելապէս աղէտալի եղաւ հայ շրջաններուն համար, դէպի Պարսկաստան տեղահան ըրաւ հայ զանգուածներ, եւ խուճապահար փախուստի մատնեց բռնապաշտէն ճողոպրածները(33)։

Արշաւանքներուն պակաս թողածը այս անգամ ալ համատարած սովը լրացուց, 1606-1610 թուականներուն աւեր ու մահ սփռելով բովանդակ Փոքր Ասիոյ մէջ(34)։

Այնպէս որ ահաւոր աղէտներ եղան երեքն ալ հայ ժողովուրդին համար, ու առիթ տուին զանգուածային նոր տեղափոխութիւններու, որոնց հետեւանքը կրեց նաեւ Արեւելեան Եւրոպան։

Այսպէս՝ խուճապային փախուստը, որ ամայացուց Փոքր Ասիան, կանգ չառաւ Պոլսոյ մօտեցած ատեն։ Ընդէ՛հ՝ հայութեան ստուար զանգուածներ զետեղեց անոր մօտակայ շրջաններուն մէջ եւ առիթ դարձաւ որ Հայու նոր օճախներ ստեղծուին Մարմարայի զոյգ ափերուն մօտ(35)։

Բայց տեղաշարժը ան մղեց աւելի առաջ։

Արդարեւ անկէ կը թուաւորուին բազմաթիւ հայ բլիշներ Պալէստինայէն մէջ։ Շահ Աբբասի արշաւանքէն ետք, 1606-1607 տարիներուն, համայնքներ մարմին կ'առնեն, օրինակ, բուլղարական Թրոնովա, Վառնա, Ռադկրատ, Շումէն եւ Փրովատիա քաղաքներուն մէջ, մինչ ձեռլայիններու ստեղծած չփոթութիւնները Հայեր պիտի չընէին մինչեւ Փլովտիլ։ Պելկրատ դացող Հայեր եւս պիտի ըլլային։ Փախստականներու ալիքները կը հասնէին միւս կողմէ մինչեւ Վալահիոյ եւ Մոլդովայի հայաշատ քաղաքներուն(36)։

33) Դաւրիժեցի, Գիրք պատմութեանց, էջ 26-39, 43-57։

Լէօ, Հայոց պատմութիւն, Գ., էջ 236-263։

Օրմանեան, Ազգապատում, Բ., էջ 2296-2298։

34) Առաքել Դաւրիժեցի, անդ, էջ 79-92, 632-636։

Լէօ, Հայոց պատմութիւն, Գ., էջ 263-266։

Օրմանեան, Ազգապատում, Բ., էջ 2306-2307։

35) Դաւրանալցի, անդ, էջ 69։

Օրմանեան, Ազգապատում, Բ., էջ 2370-2372։

Բաբգէն Կաթողիկոս, Յուցակ ձեռագրաց Ղալթիոյ Աղ. Մատենադարանի, էջ 35։

Տաշեան, Յուցակ ձեռագրաց Վիեննայի Կայս. Մատենադարանի,

էջ 14։

Օրմանեան, Ազգապատում, Բ., էջ 2305։

36) Դաւրանալցի, Ժամանակագրութիւն, էջ 68-69։

Նոյն այդ ԺԷ. դարուն Արեւելեան Եւրոպայի Հայերը այլապէս ալ նշաւակ պիտի դառնային այնպիսի տաղնապներու, որոնք պիտի ցնցէին դարաւոր կապերը գաղութէ գաղութ, եւ առաջին հերթին լեհահայոց ու Մոլդովայի Հայերուն միջեւ, երկու գաղութներ, որոնք մտրոյղ երեք դար սերտ կապեր ունեցեր էին այլազան մարզերու վրայ:

Առաջինը այդ տաղնապներէն լեհահայ գաղութի ծոցին մէջ պայթած դաւանական փոթորիկն էր:

Շատ ծանօթ է Նիկոլի անուան հետ կապուած մեծ ողբերգութիւնը որպէսզի կարիք ըլլար մանրամասնութեանց դիմել: Ըսենք միայն որ այդ եղկելի սնափառը պիտի չյաջողէր իր շահատակութեանց մէջ եւ լեհահայերու դաւանափոխութիւնը գուցէ չառնէր իր չարաշուք ընթացքը՝ եթէ հայ հոգեւոր վերին իշխանութիւնները աշխուրջ մնացած ըլլային:

Պէտք է ըսել որ ժողովրդական խաւերը աւելի զգաստ եղան Լվովի հայ թեմին մէջ, ու երկար ատեն թումբ կանդնեցան իրենց դաւանանքին դէմ սարքուող դաւերուն, այն ատեն միայն տեղի ապրով՝ երբ իրենց դէմ գտան հալածանքն ու բռնի ուժը:

«Բռնի միութիւն»ը միակ ճիշդ բառն էր որ տրուեցաւ այդ դաւանափոխութեան: Ան գլուխ ելաւ ոչ միայն Հռոմի եւ անոր միսիոնարներուն սաղրանքներուն շնորհիւ, այլ այն ճնշումներուն երեսէն, որոնք լեհ արքունիքէն կու գային (37):

Եւ հաւատացեալներու խոնարհ դասն եղաւ դարձեալ որ աղէտը միշտ կանխել փորձեց, եւ երկար ատեն չհամակերպեցաւ իրեն պարտադրուած դաւանափոխութեան:

Բազմաթիւ յիշատակութիւններ կան, օրինակ, պարագաներու մասին, երբ հաւատացեալներ լեհական քաղաքներէն Մոլդովա

Դաւրիժեցի, անդ, էջ 145:

37) Դաւրիժեցի, անդ, էջ 280-285:

Սիւմնա Լեհացի, Վէպ Նիկոլական (Կամեմից, էջ 202-214):

Կ. Եզեմնց, Բռնի միութիւն Հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հռովմայ, Ս. Պետերբուրգ, 1884:

Օրմանման, Ազգապատում, Բ., էջ 2375-2382, 2410-2419, 2439-2441, 2476-2481, 2533-2538, 2590-2602:

Ալաշիս Մարիա Պիտու, Կարճառօտ տեղեկութիւնք... (Բռնի միութեան մէջ):

Գարբիէլ Եպ. Այվազովսքի, Նիկոլ Եպիսկոպոս եւ պատմութիւն դարձին Հայկազանց Լեհաստանի ի կաթողիկոսութեան, վաղաքշապատ, 1877:

կ'անցնէին իրենց երախաները մկրտելու համար հայ եկեղեցւոյ աւաղանին մէջ:

Բաղմաթիւ են նոյնպէս դէպքերը երբ Լեհաստանի զանազան շրջաններէն տունով-տեղով կ'անցնէին դէպի Մոլդովա, իսկական գաղթի մը կերպարանքը տալով այդ տեղափոխութեանց(38):

Միւս կողմէ նոյն այդ ԺԷ. դարէն կը սկսի զանազան հայ կեդրոններու ստեղծումը լեհական հողին վրայ՝ Մոլդովայէն գաղթած Հայերով: Առաջին այդ կեդրոններէն Սնիաթինն եղաւ որ մարմին առաւ 1623 թ.ին Մոլդովացի Հայերով, որոնք հրաւիրուած էին Սիգիզմունդ Գ.ի կողմէ եւ որոնք իրենց եկեղեցին եւս ունեցան, զոր պետութիւնը յանձնած էր իրենց՝ առնելով Դոմինիկեաններէն(39):

Սնիաթինէն շուրջ չորս տասնամեակ ետք, 1670 թ.ին, կը ստեղծուէր Ստանիսլաւը, միշտ Մոլդովայէն հրաւիրուած Հայերով, այս անգամ Անդրէաս Փոթոցքիի կողմէ(40):

Լեհաստանի քաղաքներէն Սնիաթինը եւ Ստանիսլաւը չեղան լոկ ուր եկան բնակիլ Մոլդովայէն գաղթած Հայերը: Անոնց հետեւեցաւ, յաջորդ դարուն, նաեւ Քութին, որուն բնակչութեան սկզբնական կորիզը Մոլդովայէն եկող այդ Հայերն եղան, կորիզ, որ մենէն աւելի երկարակեացն եղաւ, եւ իր հետ մէկտեղ ապրեցուց շատ բան վաղեմի հայ աւանդութիւններէն ու իր բարբառը եւս պահեց շատ երկար(41):

11

Բախումները, որոնք տեղի ունեցան թուրք եւ լեհական բանակներու միջեւ ԺԷ. դարու վերջին քառորդին՝ իրենց դժբախտ

38) Դարիժեցի, անդ, էջ 292:

39) Իմմիմեամ, անդ, էջ 142:

Բժշկեամ, անդ, էջ 125-126:

Լեւոն Բաբայեամ, Հայերը Մոլտաւիայում եւ Բուքովինայում, Թիֆլիս, 1911, էջ 214:

40) Իմմիմեամ, անդ, էջ 140:

Բժշկեամ, անդ, էջ 119-122:

Բաբայեամ, անդ, էջ 217-218:

41) Իմմիմեամ, անդ, էջ 128:

Բժշկեամ, անդ, էջ 127-129:

Բաբայեամ, անդ, էջ 208-214:

անդրադարձումն ունեցան նոյնպէս Արեւելեան Եւրոպայի հայ կեանքին վրայ: Անոնց թատր եղաւ ոչ միայն լեհական հողը, ուր մտեր էին թուրք բանակները, այլ այն շրջաններն ալ, ուրկէ կ'անցնէր արշաւող զօրքը: Այդ շրջաններէն մէկը Մուլդովան էր, ուր, բնիկ ռումէն տարրին հետ, ճնշումներու ենթակայ կ'ըլլային Հայերն ալ եւ կը ստիպուէին յաճախ լքել իրենց օճախը(42):

Կամենիցի դրաւումը թուրքերու կողմէ 1672 թ.ին պիտի դար դժուարութեանց մատնել Կալիցիոյ Հայերը եւս, ստիպելով անոնցմէ շատերը երթալ ապաստանիլ աւելի ապահով շրջաններ՝ Լեհաստանի ներսերը:

Թրքական այդ արշաւանքը հայ զանդուած մը Կամենիցէն պիտի նետէր մինչեւ Բուլղարիա, մաս մը ճամբան ձգելով եւ մնացեալը հասցնելով մինչեւ Ֆիլիպէի շրջանը, նոր էջ մը բանալով այսպէս Բուլղարահայ զաղութի պատմութեան մէջ(43):

Բայց ինչ որ կոչուած էր բացառիկ էջ մը կազմելու Արեւելեան Եւրոպայի հայ դաղթավայրերու պատմութեան մէջ, Տրանսիլվանիոյ հայ դաղութին ստեղծումն եղաւ, մեզմէ ճիշդ երեք դար առաջ, 1672 թ.ին, նոյն այդ դէպքերուն եւ անոնց յարակից տագնապներուն պատճառով:

Անստոյգ եւ անապահով վիճակը որ ստեղծուած էր Մուլդովայի մէջ լեհ եւ թուրք բախումներու ատեն՝ Մուլդովայի հայութենէն ստուար զանդուած մը ստիպեց հեռանալ իր օճախներէն եւ ապաստան որոնել իրեն՝ աւելի խաղաղ շրջաններու մէջ: Խաղաղ այդ կայքը Տրանսիլվանիան պիտի ըլլար:

Իրականին մէջ հայ զանդուածներու խուժումը Մուլդովայէն դէպի Տրանսիլվանիոյ հողը՝ Կամենիցի դրաւումէն յետոյ չէր որ ծայր տուեր էր: Անապահովութիւնը, որուն իրենց թատր կ'ընէին Մուլդովան լեհ եւ թուրք թշնամութիւնները՝ սկսեւ էր շատ աւելի կանուխէն: Այնպէս որ Մուլդովայէն հայ զանդուած մը Տրանսիլվանիա անցեր էր արդէն անգամ մը զոյգ տասնամեակ առաջ, այն է՝ 1654 թ.ին եւ հասեր էր մինչեւ Պաշտպալով (Նիդսաբէթուպոլիս), Գէորգ Ռաքոցի Բ. իշխանին օրով, բայց ներքին եւ արտաքին խառնակութեանց ստեղծած դժուարութիւններուն պատճառով ստիպուել էր իր նախկին տեղը դառնալ(44):

42) Ալիշան, Կամենից, էջ 197:

43) «Համդէս Ամսօրեայ», 1982, էջ 276:

Ալիշան, Կամենից, էջ 194:

44) Գովրիկեան, Հայք յՆիդսաբէթուպոլիս, Ա., էջ 2:

Մուղղովայի խոռով վիճակը, որ հետզհետե կը սաստկանար, աւելի մեծ զանգուած մը պիտի քշէր դէպի Տրանսիլվանիա, այս անգամ արդէն Միքայէլ Աբաֆի իշխանին օրով, 1672 թ.ին, խուժում, որ կանգ պիտի չառնէր շուտով, երբ մանաւանդ երկու տարի ետք, 1674 թ.ին, Թաթարական արշաւանք մը կու գար արեւոծել կրկին Մուղղովան(45) :

Կարաւանները, որոնք Մուղղովայէն կու գային ապաստան որոնելու Տրանսիլվանիոյ մէջ՝ յաւերժական բնակութիւն հաստատելու համար չէր այնտեղ: Անոնք վճռած էին դառնալ իրենց հին օճախը, անմիջապէս որ խաղաղութիւնը կրկին տիրէր հոն: Ատոր

45) Տրանսիլվանիոյ հայութեան 300 ամեայ կեանքին մասին տեսնել ի միջի այլոց,

Հ. Գրիգորիս Գովրիկեան, Հայք յեղիսարեթուպոլիս Դրանսիլուանիոյ, Ա. 1893, Բ. 1899, Գ. 1905 (Վիեննա):

Նոյնին, Դրանսիլուանիոյ Հայոց Մետրապոլիսը կամ նկարագիր Կերլա Հայաքաղաքի, Վիեննա, 1896:

Նոյնին, Հայ արձանք կամ յիշատակարաններ հին եւ նոր եղիսարեթուպոլիս Հայաքաղաքէն, Վիեննա, 1906:

Բազմաքիւ յօդուածներ «Համդէս Ամսօրեայ»ի եւ հումգրքերէն «Armenia»ի մէջ իր, ինչպէս նաեւ Յովհ. Ամեցի ստորագրութեամբ:

Խաչիկ Սոմկոդեան (Kristof Szongott), Ազգազրութիւն հոնգարահայոց, Գերլա, 1903 (հումգ.):

Նոյնին, Գերլա, հոնգարահայոց մետրապոլիսը ի դերս եւ ի պատկերս, Գերլա, 1893 (հումգ.):

Նոյնին, Մենազրութիւն Գերլա քաղաքի, 4 հատոր, Գերլա, 1901-3 (հումգ.):

Նոյնին, «Armenia» ամսագիր, Գերլա, 1887-1905 (հումգ.):

Christophorus Lucacsi, *Historia Armenorum Transilvaniae*, Wien, 1859.

Սուրէն Գովանջեան, Տրանսիլվանիայի Հայերի պայքարը ազգային ինքնուրոյնութեան պահպանման համար 17-րդ դարի վերջից 20-րդ դարի սկիզբը, «Էջմիածին» ամսագիր, 1964, ԺԲ, 1965, Ա, 1966, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է:

- *Les Arméniens en Transylvanie Xe-XVIIIe siècles*, «Revue des Etudes Arméniennes», Paris 1967, p. 355-376.

Ե. ձ. Սիբուսի, Նոր նիւթեր Տրանսիլվանիոյ Հայութեան մասին (անտիպ):

Տրանսիլվանիոյ հայութեան մասին գրած են նաեւ Gyula Merza, Ստեփանոս Գիւլեր Ազնց, Հ. Միմաս Բժշկեան, Հ. Մկրտիչ Պատուրեան, Արշակ Ալքունեան, Ֆրեստերիք Մաֆլեր, եւ ուրիշներ:

Համար անոնք ղետեղուեցան սահմանամերձ քաղաքներու մէջ որ-
պէսզի ղիւրին ըլլար այդ վերադարձը:

Անոնք ի սկզբան բնակութիւն Հաստատեցին Հետեւաբար Պիս-
տրիցա եւ անոր շրջականները, ուրկէ աւելի ետքն էր որ պիտի տա-
րածուէին երկրին ներսերը:

Հունգար իշխանները, որոնք այդ միջոցին կը տիրէին Տրան-
սիլիւանիոյ, սիրալիր եղան ղէպի նորեկ Հայերը: Անոնց ղետեղումը
իրենց շրջաններուն մէջ մեծապէս օգտակար գտան երկրին տնտե-
սական բարգաւաճման Համար եւ յաջորդական հրովարտականերով
իրաւունքներ եւ արտօնութիւններ շնորհեցին անոնց(46):

Նորեկ Հայերու հանդէպ նոյնքան սիրալիր եղան Աւստրիոյ
կայսրերը երբ իրենց ամբողջական թեւարկութեան տակ առին
Տրանսիլւանիան, եւ Լէոփոլտ կայսրն ու իր յաջորդները նորանոր
հրովարտականերով օժտեցին նորեկները բազմաթիւ առանձնաշնոր-
հումներ շնորհելով անոնց(47):

Հայերը տակաւ պիտի ամրանային այսպէս Տրանսիլւանիոյ
տարբեր շրջաններու մէջ, բայց առաւելապէս կեդրոնանալով չորս
վայրեր, ուր անոնք պիտի ունենային իրենց եկեղեցիներն ու ժո-
ղովրդապետութիւնները, եւ պիտի վայելէին տեսակ մը քաղաքա-
յին ինքնավարութիւն՝ քաղաքապետի մը (պիրով) եւ քաղաքային
խորհուրդի մը ղեկավարութեան տակ: Այդ չորս վայրերն էին Կեր-
լա, որ Հայաքաղաք (Armenopol) ալ կոչուած է, Պաշտպալով կամ
Եղիսաբէթուպոլիս, Կէօրկէն եւ Չիւք-Սիփլիզ(48):

Տրանսիլւանիա ղետեղուած Հայերը այլեւս վերջնական Հայ-
րենիք ըրին զայն իրենց, այլեւս մոռցած ետ դառնալու սկզբնական
իրենց մտածումը, մանաւանդ երբ դաւանապէս ալ անջատուեցան

46) Գովրիկեան, Հայք յեղիսաբէթուպոլիս, Ա., էջ 8-9, 12, 423:

Գովրիկեան, Դրանսիլուանիոյ Հայոց մետրապոլիսը, էջ 16-17:

47) Գովրիկեան, Հայք յեղիսաբէթուպոլիս, Ա., էջ 78, 194, 210-212, Բ.,
էջ 277, 331, Գ., էջ 254:

Գովրիկեան, Դրանսիլուանիոյ Հայոց մետրապոլիսը, էջ 34-37:

48) Գովրիկեան, Սիւլիզի ու Ճուրճովի Հայ գաղթականութիւնները,
«Համադէս Ամսօրեայ», 1896, Յունուար-Յունիս: (Գերլայի եւ Եղիսաբէթուպոլսյ
մասին առանձին մեմագրութիւններով):

Բժշկեան, անդ, էջ 193-200:

Ստ. Գիւվեր Ագոնց, անդ, էջ 326-332:

Լ. Մկրտիչ Պատուրեան, Հայերը Թրանսիլւանիոյ մէջ, «Նոր Կեանք»,
Պուրթէ, 1958, Բիւ 23, 25, 28, 33, 37:

մայր բունէն: Արդարեւ իրենց եպիսկոպոսը, որ Սուչավայէն եկեր միացեր էր իր հօտին, Մինաս Զիլիհտար, պիտի ստիպուէր շուտով յարիւ Հոռմին(49), իսկ իր յաջորդը, Օքսենտիոս Վրզարեան, Պապին պիտի ենթարկէր իր բովանդակ հօտը(50):

Երեք դարերը՝ զորս հայկական Տրանսիլլանիան ապրեցաւ յետոյ՝ չահեկան եւ ուսանելի գլուխներէն մէկը կը կազմէ հայ սփիւռքի պատմութեան:

12

Պատերազմները, որոնք մղուեցան ԺԼ. դարու երկրորդ կէսէն սկսեալ երկու մեծագոր կայսրութեանց միջեւ՝ որոնք Ռուսաստանն ու Թուրքիան էին, նոյնպէս առիթներ դարձան հայ զանգուածներուն համար օճախ փոխելու:

Մեր ժողովուրդի պատմութեան մէջ ոգեւորութեան պահ մըն էր այդ: Հայկական դատը նոր փուլի մէջ էր մտած Իսրայէլ Օրիի հետ, հետզհետէ բնւէին եկեր Դաւիթ Բէգն ու Միխիթար Սպարապետը, ու Յովսէփ Էմինը անոնցմէ յետոյ՝ ամէն մէկ հանգրուանի հետ յոյսերու եւ յուսախաբութեանց նոր նոր էջեր արձանագրելով մեր դատի պատմութեան մէջ:

Կատարինէ կայսրուհին անդամ մը եւս արծարծեր էր հայոց յոյսերը, զանոնք կապելով ռուս ղէնքերու յաղթանակին: Բացուեր էր ապագայ Հայաստանի մը համար ծրագիրներ որոճալու շրջանը:

Ասպարէզ կ'իջնէին հիմա հնդկահայերը, եւ Յովսէփ Արք. Արղւութեան իրեն համար էջ մը կը բանար մեր նորագոյն պատմութեան մէջ: Փոթեմքինի կրթնած՝ ան, ռուս արքունիքը կը կապէր Հայոց ու Հայերը ռուս արքունիքին, եւ Հայեր կը տեղափոխէր մէկ շրջանէն միւսը, նոր քաղաքներ ստեղծելով ռուս հողի վրայ:

Արեւելեան Եւրոպան եւս գործունէութեան դաշտ կ'ընէր իրեն:

Արդարեւ Հիւսիսային Դորքուշայի շրջանէն տեղափոխուած Հայերով էր որ պիտի բնակեցուէր, ԺԼ. դարու վերջերուն, ռուսական հողի վրայ ստեղծուող այն նոր քաղաքը որ Գրիգորուպոլիսն էր:

49) Ալիշամ, Կամենից, էջ 127, 144, 196, 199:

50) Ալիշամ, անդ, էջ 128, 129, 199:

Գովրիկեամ, Դրանսիլուանիոյ Հայոց մետրապոլիսը, էջ 116-133:

Գովրիկեամ, Հայք յնդիսաբեթուպոլիս, Ա., 18-26:

Նոր Նախիջևանէն հտք, որ 1779 թ.ին Հիմնուեր էր Յովսէփ Արք. Արղութեանի նախաձեռնութեամբ Որիմէն բերուած Հայերով, նոյն այդ Արղութեանի ջանքերով է որ Իսմայիլէն եւ շրջաններէն տեղափոխուած Հայեր նոր քաղաք մը կը ստեղծէին Օտեսայի մօտիկ(51):

Ռուս եւ թուրք բախումները, որոնք պիտի շարունակուէին Ալեքսանդր Ա. Ձարին օրով, առիթ պիտի դառնային ուրիշ Հայ զանգուածներու ալ տեղափոխութեան, այս անգամ արդէն Բուլղարիայէն դէպի ռումէն երկիրներ:

Դարաւոր շփում էին ունեցած Ռումանիոյ եւ Բուլղարիոյ հարեան երկու Հայ գաղութները, մանաւանդ այն համայնքները, որոնք զետեղուած էին Դանուբի զոյգ ափերուն վրայ կամ անոնց մօտիկ: Այս շփումներուն մաս են կազմած հոգեւոր կապերու հետ մէկտեղ, որոնք սերտ են եղած առիթէ առիթ, նաեւ ընտանեկան յարաբերութիւնները, որոնք տեսակ մը խնամութիւն են հաստատած մէկ ափէն միւսը: Բայց ԺԹ. դարու առաջին տասնամեակին է որ Դանուբի հանդիպակաց եզերքէն Հայերու հոծ թիւ մը գաղթած կը գտնենք ռումանական հող:

Այդ այն պահն է երբ Մանուկ Պէյ Միրզայեան, համբաււոր Ռուսոյնքին, ծանօթ՝ իր գործօն դերով դանուբեան անցուդարձերուն մէջ երեք սուլթաններու, Սելիմ Գ.ի, Մուսթաֆա Գ.ի եւ Մահմուտ Բ.ի օրով, պիտի նպաստէր ի վերջոյ ռուս զէնքերու յաղթանակին՝ 1806-1812 թթ. ռուսեւթուրք պատերազմին մէջ եւ պիտի աջակցէր ռուսեւթուրք հաշտութեան դաշնագրին կնքման՝ 1812 թ. Մայիսին, դաշնագիր, որ առաւելապէս նպաստաւոր պիտի ըլլար Ռուսիոյ: Հետեւելով Մանուկ Պէյի՝ անոր հետ մէկտեղ Ռուսոյնքէն եւ շրջականներէն պիտի տեղափոխուէին բազմաթիւ Հայ ընտանիքներ՝ հաստատուելու համար Պուլքէշ, եւ Ռումանիոյ տարբեր վայրերը եւ ոմանք Մանուկ Պէյի ընկերանալու համար մինչեւ Պեսարապիա(52):

Նորեկ Հայ ընտանիքները Հիմնապէս պիտի փոխէին Պուլքէշի Հայ համայնքին դիմագիծը, ղեկավար դեր ստանձնելով մանաւանդ ազգային գործերու մէջ:

51) Լէօ, Հայոց պատմութիւն, Գ., էջ 867, 906:

Լէօ, Յովսէփ Կաթ. Արղութեան, Թիֆլիս, 1902:

H. Dj. Sirouni, *Le rôle des Arméniens de l'Inde dans le mouvement d'émancipation du peuple arménien*, Bucarest, 1927.

52) Յ. ձ. Սիրումի, Մանուկ Պէյ Պուլքէշի Հայ կեանքին մէջ (առանձին գլուխ Մանուկ Պէյի նուիրում մեծագրութեամբ մէջ. ամսիկ):

Ռուսեւթուրք բախումներու պահուն Արեւելեան Եւրոպայի երկիրներուն մէջ՝ յաճախ կ'աշխուժանար Աւստրիան ալ, իսկ ԺԸ. դարու վերջերուն ան արդէն պիտի յաջողէր կորզել Բուլղարիան։ Բուլղարիայի հետ Աւստրիոյ կ'անցնէր Սուլթանի հայ համայնքը եւս, համայնք, որ Մուլդովայի հայ գաղութին անդրանիկ օրրանն էր եղած, երկար ժամանակ եղած էր անոր համար նաեւ հոգեւոր կեդրոն, եւ համբաւաւոր էր իր զոյգ վանքերով (Հաճկատար եւ Ջամբա) եւ մէկէ աւելի իր եկեղեցիներով, որոնցմէ Ս. Խաչն ու Ս. Սիմէոնը պիտի հասնէին մինչեւ մեր օրերուն։

Սուլթան, բովանդակ Բուլղարիայի հետ մէկտեղ՝ որուն տարբեր վայրերուն մէջ եւս Հայեր կային, ամբողջ դարուկէս պիտի մնար աւստրիական տիրապետութեան տակ, ինքնուրոյն կղզի մը կաղմելով այսպէս, ուր հայ եկեղեցին, նետուած կաթոլիկ ուկէանոսի մը մէջ, պիտի շարունակէր սակայն միշտ կառչած մնալ իր պապերու հաւատքին, դիմանալով բոլոր խայծերուն եւ փորձութիւններուն։

Արեւելեան Եւրոպայի հայոց քարտէսին վրայ տեղաշարժ մը կէր այս իրադանին մէջ, այլ ժամանակաւոր պանդխտութիւն մը միայն։ Առաջին Համաշխարհային պատերազմէն ետք ան պիտի դար կրկին կցուելու Մուլդովայի իր քոյր համայնքներուն, որոնցմէ երբեք չէր խզուած հոգւով։ Հաճկատարը, իր պանդխտութեան ատեն ալ, շարունակեւ էր նուիրական ուխտավայրը մնալ բոլոր այդ համայնքներուն, որպիսին կը շարունակէ մնալ այսօր ալ, երբ արդէն անհունապէս նօսրացած են ուխտաւորները(53)։

Ուրոյն հայ գաղութներու դոյութիւնը ռումէն զոյգ իշխանապետութեանց մէջ՝ սփիւռքի Հայոց պատմութեան շահեկան էջերէն մէկն է։

Չոյգ այդ իշխանապետութիւնները, որոնք Մուլդովան եւ Մունթենիան (Վալահիա) էին, ունէին իրենց բազմաթիւ հայ հա-

53) Բաբայեաթ, անդ, էջ 176-181։

Թ. Ճ. Սիրումի, Հայ եկեղեցին Ռումէն հողի վրայ, Էյմիաթիմ, 1906, էջ 97-128։

Թ. Ճ. Սիրումի, Հայկական Սուլթան (ամսիպ)։

մայնքները: Մուղղովայի շրջանին մէջ էին Եաշը, Սուչավան, Պոթոչանը, Ռոմանը, Կալացը, Պաքըուն եւ Թրկո-Օքնան:

Մուղղովական հողի վրայ պահ մը հայ համայնք եւ եկեղեցի գոյութիւն ունեցեր էին նաեւ Սիրէթի, Հոթինի, Վասուլայի եւ Տոբոհոյի մէջ: Իսկ Մունթենիոյ մէջ՝ կային Պուքէշի, Փիթէշի եւ Պրայլայի հայ համայնքները իրենց եկեղեցիներով: Վըլքով գետը Ֆօքլան քաղաքը կը բաժնէր երկու մասերու՝ որոնցմէ մէկը կը մտնէր Մուղղովայի սահմաններուն մէջ, միւսը՝ Մունթենիոյ: Երկու մասերուն մէջ ալ Հայերը ունէին իրենց աղօթատեղին:

Աւելցնենք որ Մուղղովայի մէջ հայ համայնքները եւ իրենց եկեղեցիները կը թուագրուէին ԺԴ. դարէն. Պոթոչանի եկեղեցին կառուցուած էր, օրինակ, 1350 թ.ին, Սուչավայինը՝ 1388 թ.էն առաջ, իսկ Եաշինը՝ 1395 թ.ին:

Ինչ կը վերաբերի Մունթենիոյ շրջանին, Պուքէշի մէջ 1638 թ.ին է միայն որ հայ եկեղեցի կը յիշատակուի, մինչ աւելի նոր են Պրայլայի եւ Փիթէշի հայ եկեղեցիները:

Եթէ միեւնոյն ժողովուրդի մը զաւակները դարերով երկու իշխանապետութեանց վերածուած մնացին՝ յանձին Մուղղովայի եւ Մունթենիոյ, եւ կառավարուեցան տարբեր իշխաններով ու տարբեր պետական կազմով, դարմանալի թող չթուի եթէ նոյն այդ զոյգ իշխանապետութեանց մէջ ապրող Հայերը եւս իրենք զիրենք տարբեր դադութ սեպեցին:

Աւելին: Միակ ժողովուրդի մը ծոցին մէջ ապրող զոյգ այդ հայ գաղութները իրարու խորթ մնացին իրենք ալ:

Ռումէն զոյգ իշխանապետութեանց միացման հետ էր որ 1859 թ.ին այլեւս միակ դադութ մը կազմեցին Մուղղովայի եւ Մունթենիոյ Հայերը եւս, թէեւ ոչ օրդանական եւ ոչ ալ հոյեկան կապ գոյութիւն ունեցաւ իրենց համայնքներուն միջեւ դեռ երկար ատեն, մինչեւ միակ հայ թեմի մը ստեղծումը Միացեալ Ռումանիոյ մէջ 1918 թ.էն ետք(54):

54) Ռումանիոյ հայ համայնքներուն վերջին դարու գամագամ համգրումներուն եւ Ռումանիայ քեմիմ վերստեղծմամ փուլերուն մասին տեսնել՝

Արշակ Մ. Ալքումեան, Տեղեկադրութիւն Հայոց դաղթականութեան սրբ. ի Մուսովլաքիա, Հունգարիա եւ Լեհաստան, 1877:

Պետրոս Գաի. Մամիկոնեան, Ռումանահայոց ներկայն եւ ապագայն, Կալաց, 1895:

Վաքդամ Մէշտուտեան, *Istoria Armenilor*, II, 1925:

Վլատ Պըմըցիանու, Հայերը Ռումէն պատմութեան եւ կեանքին մէջ, 1988 (ռում.):

15

1877-1878 տարիներու ոռոսեւթուրք պատերազմը կոչուած էր ինքն ալ դեր խաղալ Արեւելեան Եւրոպայի զանազան հայ զաղութներուն մէջ, ինչպէս առհասարակ բովանդակ հայ ժողովուրդին համար:

Այդ պատերազմէն ետքն էր, օրինակ, որ Բուլղարիա իր հայ զաղութն ունեցաւ տասնեակ իր համայնքներով՝ որոնք բոլորն ալ իրենց աղօթատեղիներն ունէին, թէեւ դեռ առանց ուրոյն թեմ մը կազմելու: Այդ համայնքներէն յիշենք Սոֆիան, Ֆիլիպէն (Բլովատի), Վառնան, Պուրկազը, Ռուսճուքը, Շումլան, Այթոսը, Խաբովոն, Սիլիստրան, Պաղարճը, Սլիվէնը:

1877-1878 թթ. ոռոսեւթուրք պատերազմէն ետք էր որ հիւսիսային Դոպրուշան վերջնապէս կցուեցաւ անկախ Ռումանիոյ, եւ ոռումանահայ զաղութի մաս սկսան կազմել նաեւ այն հայ համայնքները՝ որոնք կ'ապրէին կցեալ շրջանին մէջ: Այդ նոր համայնքները Գոսթանցան, Պապատաղը, Թուլչան եւ Սուլինան էին, որոնք 15ի կը վերածէին այս կերպով Ռումանիոյ հայ համայնքներուն թիւը, թէեւ անոնք եւս երկար ատեն ուրոյն թեմ մը չկազմեցին՝ հակառակ քանիցս եղած փորձերուն(55):

16

Սարսափներու եւ մղձաւանջներու շրջանը զոր ապրիլ ստիպուած էր Հայը Համիտի ճիրաններուն մէջ՝ զայն ստիպեց անդամ մը եւս ազատ ափեր որոնել իրեն:

Արեւելեան Եւրոպան պիտի աշխուժանար անդամ մըն ալ:

Արդարեւ, անցեալ դարուն վերջին տասնամեակը փախստական Հայերու նոր կարաւաններ պիտի բերէր Թուրքիայէն՝ զետեղելու համար զանոնք Բուլղարիոյ եւ Ռումանիոյ հիւրընկալ ափե-

Ֆրէտերիք Մալիէր, *Rapport sur une mission scientifique en Roumanie*, Paris. 1930.

Թ. ձ. Սիբուսի, Ռումանահայ թեմը, «Հայրենիք Ամսագիր», 1929, Օգոստ.-Սեպտ.:

Academia Româna, Grigore M. Buiuciu, 1913.

Տեղեկագիրքներ, եւ Ռումանահայ քեմիստ, Ռումանական Ակադեմիայի Եւ Պետական Արխիւներու արխիւային նիւթերը:

55) Նայմը:

բուն վրայ: Համիտեան հալածանքներէն խոյս տուող զանգուածներն էին անոնք, որոնք կ'երթային ապաստան փնտռել ազատ երկինքներու տակ, այնտեղ հաստատուած իրենց ազգակիցներուն մօտ:

Թուրքիայէն Դանուբի ափերը խուժող այս զանգուածներուն հետ՝ կերպարանափոխ սկսան ըլլալ Բուլղարիոյ եւ Ռումանիոյ հայ դադուքները: Անգամ մը եւս թարմացան անոնք:

Բուլղարիան իր հայ դպրոցները պիտի ունենար արդէն այդ տարիներուն՝ Թուրքիայէն հասնող նոր դադթականութեան շնորհիւ, հայ թերթեր լոյս պիտի տեսնէին Բուլղարիոյ զանազան քաղաքներուն մէջ, ու հայ յեղափոխութիւնը բոյներ պիտի ստեղծէր հոն իրեն:

Դանուբի միւս եզերքին վրայ հայ կեանքը պիտի խլրտէր նոյնպէս: Ռումանիան իր հայ տպարանը եւ իր հայերէն հրատարակութիւնները պիտի ունենար, Պուքրէշի հայ դպրոցը պիտի ազատէր իրեն սպառնացող փակման վտանգէն, եւ հայ վարժարան պիտի ստեղծուէր Քոսթանցայի մէջ: Պիտի աշխուժանային Ռումանիոյ ուրիշ շրջաններ եւս, ինչպէս Կալացը, Պրայիւան, Թուլչան, Սուլինան(56):

17

Աւելի նոր օրերու մէջ ալ կանգ չառին տեղաշարժերը: Այս անգամ եւս Թուրքիոյ նոր դէպքերն էին որ հայ հոսանք մը միշտ պիտի քշէին դէպի Դանուբի ափերը:

Օսմանեան Հուրրիէթը, 1908 թ.ին, բացեր էր երկրին դռները: Եթէ իրեն շնորհուած այդ ազատութենէն օգտուելով՝ հայ փախստականութիւնը աշխարհի բոլոր կողմերէն ետ կը դառնար վերաշինելու համար իր օճախները, քիչ չեղաւ նաեւ անոնց թիւը, որոնք օգտուելով նոյն այդ ազատութենէն, իրենց շունչը օտար երկիրներ առին:

Նոր ձեւի արտագաղթ մըն էր այս, տեսակ մը փախուստ, որ տարերային կերպարանք առաւ պահ մը:

Այս փախուստին մէջ նուազ դեր չկատարեց ղինուորագրութեան օրէնքը, որուն սահմանադրական Թուրքիան ենթարկեր էր նաեւ ոչ-խալաները, եղբայրութիւնը կատարեալ ընելու համար, եղբայրութիւն, որ բնաջնջումի նոր առիթ մը պիտի հանդիսանար շուտով:

56) Նայճը:

Նոր խոստում մը սկսաւ այն ատեն դէպի Միացեալ Նահանգները, մեծ մասամբ հայաբնակ գաւառներէն: Ուրիշ հոսանք մը դնաց խառնուիլ պալքանեան հայ դադութներուն:

Վերջին այս հոսանքը առաւելապէս Ռոտոսթոյէն եւ Քեմախէն էր, որ կ'երթար միանալ Բուլղարիոյ եւ Ռումանիոյ իր հայ-բնակիցներուն, որոնց թիւը աճած էր Համիտի օրով(57):

Պալքանեան պատերազմը իր կարգին հոծ թիւով Հայեր հեռացուց քիչ ետք թուրք հողէն, անոնցմէ շատերը բերել ղետեղելով Նոյնպէս Դանուբի շրջանին մէջ, առանց սակայն զգալի կերպով փոխելու հայ համայնքներուն դիմադրօն այնտեղ: Փոխաբէն՝ Նոյն այդ պատերազմը երկու հայ համայնքներ անջատելով Բուլղարիայէն, կը միացնէր ռումանահայ դադութին: Այդ երկու համայնքները Սիլիսթրիան եւ Պաղարճըն էին, որոնք առժամապէս Ռումանիոյ հայ թեմին մաս պիտի կազմէին մինչեւ իրենց վերակցումը Բուլղարիոյ՝ 1940 թ.ին(58):

Առաջին Համաշխարհային պատերազմը՝ իր կարգին՝ խաղաղ չթողուց Դանուբի շրջանն ալ: Նախ առիթ դարձաւ որ Բուլղարիա ապաստան տայ իր դաշնակից Թուրքիոյ հողէն փախչող Հայերու: Միւս կողմէ՝ Ռումանիոյ հողէն տարտղնեց ստուար թիւ մը Հայերու, որոնք դերման բանակներու Ռումանիա խոստումին հետ՝ կը ոտկալուէին Ռուսաստան խոյս տալ, հոն անցընելու համար պատերազմի շրջանը(59):

Զինադադարը, 1918 թ.ին, անգամ մը եւս տեղաշարժի ենթարկեց այս շրջաններու Հայերը: Նախ՝ Բուլղարիայէն Պոլիս վերադարձուց շատերը, հոն ապաստան որոնել դացողներէն ոմանք դարձան ետ, բմրոշխնելու համար զինադադարին ստեղծած դինովութիւնն այս անգամ: Միւս կողմէ Ռումանիա դարձուց պատերազմի շրջանին հոնկէ Ռուսաստան խոյս տուողները՝ աշխուժացնելով կրկին ջլատուած հայ համայնքները, հիմա արդէն Միացեալ Ռումանիոյ հովանիին տակ(60):

Աւելի: Տրանսիլլիանիոյ Ռումանիոյ սահմաններուն մէջ կցումով մերադարձան շառաւիղները այն կարաւաններուն, որոնք Մուղովայէն հոն ապաստանելու դացեր էին երկուքուկէս դար առաջ, թէեւ արդէն կորսնցուցած իրենց բարբառն ու դաւանանքը(61):

57) Նայճը:

58) Նայճը:

59) Նայճը:

60) Նայճը:

61) Նայճը:

Սուչավան, իր կարգին, մէկուկէս դար Աւստրիոյ կցուած մնալէ ետք Ռումանիոյ կը վերադարձուէր, տեղւոյն հայ համայնքը ռումանահայ թեմին կցելով կրկին, իր դաւանանքն ու աղօթատեղիները անվթար պահած՝ բայց անճիտուած թուապէս:

Իզմիրի աղէտը, 1922 թ.ին, անգամ մը եւս չփրկահար պիտի ընէր հայ ժողովուրդը: Զինադադարի չորս տարիներու դինոյութեան ու պատրանքներուն մէջ անգամ մը եւս օրօրուելէ ետք՝ Թուրքիոյ հայ մնացորդացը կը դիմէր խուճապային փախուստի: Խոյս կու տար երկրէն ով որ կրնար, օտար ափերու վրայ հիմը դնելու համար հայ նոր սփիւռքին:

Հայ նոր տարագրութիւնը, ուրիշ երկիրներու կարգին, ապաստանելու կու դար նաեւ Բուլղարիա եւ Ռումանիա: Թրակիան տաւելապէս կու դար միանալ Բուլղարիոյ իր հայրենակիցներուն, մինչ Պոլիս եւ Իզմիր կը խուժէին ընդհանրապէս Ռումանիա, եւ երկու երկիրներուն մէջ ալ կը ստեղծուէին այս կերպով երկու կենսունակ հայ գաղութներ (62):

Յիշենք այս առիթով թէ Ռումանիոյ հայ թեմին վերստեղծման օրերուն, 1922 թ.ին, 22 համայնքներէ կը բաղկանար ռումանահայ գաղութը:

Ասոնցմէ եօթն՝ երեմնի Մուրովայի հայ համայնքներն էին (Եաշ, Պոթոլան, Ռոման, Կալաց, Պաքու, Թրկո-Օքնա եւ Ֆօքշան), երեքը՝ Մունթենիոյ պատկանած էին (Պուքէշ, Պրայլա եւ Փիթէշ), չորսը՝ 1878 թ.ին աւելցած էին Տոպրուճայի կցումով (Բոսթանցա, Պապատաղ, Թուլչա եւ Սուլինա), մէկն ալ՝ Սուչավան, 1918 թ.ին վերադարձած էր ետ, չուրջ մէկուկէս դար Աւստրիոյ կցուած մնալէ ետք:

Միւսներէն երկուքը, Սիլիսթրէն եւ Պաղարճըքը Ռումանիոյ կցուած մնացին պահ մը, Պալքանեան պատերազմէն ետք, իսկ Քիշնեւ, Զէթաթէ-Ալպը, Պըլց, Հընչէշթ եւ Իսմայիլ Պեսարապիոյ հինգ հայ համայնքներն էին, որոնք չուրջ քսան տարի մաս պիտի կազմէին Ռումանիոյ հայ թեմին (63):

Տեղաշարժերը, որոնք փոփոխութեան կ'ենթարկէին այսպէս Արեւելեան Եւրոպայի Հայոց քարտէսը՝ եթէ ճակատագրական դեր

62) Նոյնը:

63) Նոյնը:

կատարեցին այդ քարտէսը կազմող գաղթօճախներէն ոմանց դոյու-
թեանն համար, նուազ ողբերգական չեղաւ անոնց դերը հայ եկե-
ղեցւոյ ճակատագրին մէջ:

Տեղ տեղ խամրեցուցին դայն, ու տեղ տեղ դայն ճեղքեցին
իր հիմերուն մէջ: Ժէ. դարու կէսերէն հայ եկեղեցին Լեհաստանը
կորսնցուց, եւ քիչ ետք Տրանսիլվանիան, իր հովանիին տակ ի վեր-
ջոյ պահելով միայն ուսմէն երկիրներն ու Բուլղարիան:

Այնպէս որ ամէն անգամ որ փոփոխութեան կ'ենթարկուէր
Արեւելեան Եւրոպայի Հայոց քարտէսը, սոյն յաճախակի տեղա-
շարժերու երեսն, քարտէս կը փոխէին հայ թեմերը եւս:

Պէտք է ըսենք, սկիզբէն, թէ նոյն այդ քարտէսին վրայ
ստեղծուեր էին հայ եկեղեցւոյ առաջին թեմերը հայրենիքէն դուրս,
եւ անոնք, սփիւռքի միւս հայ թեմերուն նման, Մայր Աթոռին
կապուած մնացեր էին դարեր շարունակ, սկսեալ իր Կիլիկիոյ շըր-
ջանէն: Առաջին հայ եպիսկոպոսը՝ որ Արեւելեան Եւրոպան հով-
ուեց՝ Գրիգոր Եպիսկոպոսն էր, որ Լվով հաստատուեցաւ 1365
թ.ին, Մեսրոպ Կաթողիկոսի կոնդակով, անոր յաջորդին՝ Կոստան-
դին Կաթողիկոսի կողմէ եւս վերահաստատուելով իր պաշտօնին մէջ
տասը տարի ետք, 1375 թ.ին: Քիչ ետք, Թէոդորոս, 1384 թ.ին,
Յովհաննէս Եպիսկոպոսը Լվովի առաջնորդ կը հաստատէր իր մէկ
կոնդակով (64):

Երբ 1401 թ.ին Մուղղման կ'անջատուէր Լվովի իրաւասու-
թենէն՝ միշտ Սիւ նստող կաթողիկոսներն էին որ վաւերացուցին
անոր յաջորդական եպիսկոպոսները, իսկ Մայր Աթոռին էջմիածին
դառնալէն ետք՝ հոնկէ է որ կը հասնէին այլեւս Արեւելեան Եւրո-
պայի ուղղուած կոնդակները (65):

Ու անկէ յետոյ ամբողջ երկու դար, Արեւելեան Եւրոպան
շարունակեց մնալ էջմիածնի հովանիին տակ, այսինքն մինչեւ այն
շարաշուք շրջանը՝ երբ Լվովի թեմը Հռոմի փարախը տարին, էջ-
միածնին ձգելով լոկ ուսմէն իշխանապետութեանց մէջ ապրող իր
հաւատացեալները, ինչպէս եւ անոնք, որոնք կ'ապրէին Արեւելեան
Ռումելիի թեմին մէջ կամ Սուլավայի մէջ պիտի մնային՝ Բուքո-
վինայի կցումէն ետք Աւստրիոյ կայսրութեան (66):

64) Ալիշան, Կամենից, էջ 5-13, 215-224:

65) Ալիշան, անդ, էջ 225-227, 239-265:

Բաբայեան, անդ, էջ 117-127:

66) Հայ քեմերու տեղաշարժիմ մասին տեսնել՝

Օրմանեան, Աղգապատում, Բ., էջ 2286, 2546-2549:

ԺԹ. դարուն սակայն Պոլիս տէր դարձաւ Արեւելեան Եւրոպայի զոյգ հայ թեմերուն՝ զորս հովուեց նուիրակներով եւ այցելուններով, առանց յաջողելու սակայն իր հովանին պահպանել մնալուն եպիսկոպոսներու միջոցով:

Արեւելեան Եւրոպայի զոյգ այդ թեմերը, որոնք Արեւելեան Ռուսելին եւ Մոլդո-Վալաքիան էին, Պոլսոյ կապուած մնացին մինչեւ անցեալ դարու վերջերուն(67):

Հասաւ պահ մը սակայն, երբ Պոլսոյ աթոռը անճրկեցաւ իր թեւին տակ պահելու զանոնք: Այդ այն պահն էր, երբ հայ յեղափոխական շարժման հետ հակաթուրք քարոզչութիւնն ալ ծաւալիլ սկսած էր հայ դադուքներու մէջ, եւ Պոլսոյ պատրիարքը, Օրմանեան, որ ի վիճակի չէր Համիտի հրամանները կիրարկելու՝ զանոնք խոհեմ պահելու համար, խոհեմութիւն սեպեց զանոնք յանձնել Մայր Աթոռի հովանիին(68):

Աւելցնենք որ իր թեմերուն ճշգրիտ քարտէսը երբեք չունեցաւ հայ եկեղեցին, ոչ ալ այդ թեմերուն լրիւ մէկ ցանկը հայ եկեղեցւոյ պատմութիւնը աւանդած է մեզի: Յուցակը, որ կը մնայ Ոսկան Երեւանցիէն(69), հեռու է հայ թեմերուն ճշգրիտ պատկերը տալէ, իսկ այն, որ Սիմէոն Երեւանցին պատրաստեց, դատապարտուած էր թուղթի վրայ մնալու, պայքարներուն երեսէն զորս մղեցին հայ նուիրապետական աթոռները՝ իրարու ձեռքէ խլելու համար այս կամ այն թեմը: Արդ, Սիմէոն Ջամբուի մէջ կը թուէ կաթողիկոսութեան ենթակայ բոլոր վիճակները եւ տաճկահայ Յրդ վիճակին մէջ կը դնէ (առաջինը ըլլալով Պոլիսը եւ երկրորդը՝ Էտիրնէն) Խրիմը, «որուն հետ են Բեսարաբիա, Վալաքիա, Մոլտովիա եւ Պուլկարիա»(70):

Բաբգէմ Կաթ. Կիւլեսերեան, Յովհաննէս Կոլոտ, 1904, էջ 205-206:

Արշակ Ալպոյանեան, «Ընդարձակ Օրացոյց», 1908, էջ 295-297:

Արշակ Ալպոյանեան, «Ամեմում Տարեցոյցը», 1909, էջ 213:

Աւետիս Պերպերեան, Պատմութիւն Հայոց, 1871, «Բաշխումն երեսփոխանաց», էջ 424-425:

«Ոսկան Երեւանցի, «Յուցակ», Այրարատ, էջ 31:

Սիմէոն Կաթողիկոս Երեւանցի, Ջամբու, Գիրք որ կոչի յիշատակաբան արձանացուցիչ, Վաղարշապատ, 1873:

67) Նայմը:

68) Նայմը:

69) Նայմը:

70) Նայմը:

Արեւելեան Եւրոպայի քարտէսին վրայ արձանագրուած սոյն տեղաշարժերը դեր կատարեցին հայ դաղթօճախներու դիմագծութեան մէջ:

Այդ դաղթօճախները մեր պատմութեան մէջ ուրոյն ընտանիք մը կը ներկայացնեն: Ոչ միայն հասարակաց ծագումին պատճառով, որ անոնցմէ մեծ մասին համար մինչեւ Խրիմ կը հասնի եւ զոր աւանդութիւնները անկէ ալ մինչեւ Անի կ'երկարաձգեն, այլ նաեւ դարաւոր կապերուն հետեւանքով, զորս իրարու հետ պահպանած են անոնցմէ ոմանք:

Առաջին հերթին այդ տեղաշարժերուն հետ Հայոց բարբառը ինքն ալ տեղէ տեղ քալեց եւ հայ բարբառագիտութիւնը իրաւունք ունի միակ ընտանիքի մը մէջ համախմբելու Խրիմէն սերած հայ դաղութիւններուն զործածած բարբառները, որոնք ձայնաբանական ու ձեւաբանական միեւնոյն յատկանիշներով կը ներկայանան, որքան ալ տեղէ տեղ փոփոխութիւն կրած ըլլան անոնց բառադանձերը՝ նախ թաթարական եւ ապա լեհական, ռումանական եւ հունգարական լեզուներու անմիջական ազդեցութեան տակ(71):

Տեղաշարժերը տեղէ տեղ փոխադրեցին հայ աւանդութիւններն ալ: Ու այս աւանդութեանց մէջ ամենէն ուշագրանները այն սովորութիւններն էին, որոնցմով կը ղեկավարուէին հայ համայնք-

71) Հ. Աքսէմ Այտըմեան, Քննական քերականութիւն արդի Հայերէն լեզուի, 1866, Ա. մաս, էջ 180-193:

Հրաչեայ Աճառեան, Քննութիւն Սուլաւայի Հայոց բարբառի, «Բազմավէպ», 1899, էջ 112, 218, 325, 516, 557:

Հրաչեայ Աճառեան, Քննութիւն Առտիւլի բարբառի, Երևան, 1963:

Hanusz, *Sur la langue des Arméniens polonais, I, Mots recueillis à Kuti, Cracovie* 1886.

Bittner, M., *Einige kuriosa aus dem armenischen dialekte der Walachei, und der Moldau*, «Յուշարձան», էջ 361-368:

Յովհ. Ամեցի (Հ. Գրիգոր Գովրիկեան), Ճաշակ Հունգարահայոց լեզուէն, «Համդէս Ամսօրեայ», 1888, էջ 84-86:

Աստու Վոյքեան, Հաւաքածոյ Դրանսիականիոյ Հայոց դաւառական բառերուն, «Համդէս Ամսօրեայ», 1897, քիւ 6, 8, 9, 10, 1898, քիւ 2, 4:

Թ. Ճ. Սիբուսի, Ակնարկ մը Ռումանահայ բարբառին վրայ, «Հայրենիք Ամսագիր», 1930, Հոկտ., էջ 105-113, Նոյ., էջ 100-107:

H. Dj. Siruni, *Considérations sur le dialecte arménien des Pays Roumains, tirage à part de «Studia et Acta Orientalia», VII, 1968.*

ները, եւ զորս անոնք փոխանցեցին դաղութէ դաղութ, ամէն տեղ ալ նուիրագործուած՝ հիւրընկալ իշխանութեանց կողմէ ընծայուող առանձնաշնորհումներով: Այս աւանդութեանց մաս կազմեցին, օրինակ, դատական իրաւասութիւնները, զորս ամէնուրեք վայելեցին հայ համայնքները աւելի կամ նուազ չափով, ինչպէս եւ քաղաքային եւ քաղաքապետական իրաւունքները, որոնք շնորհուեցան իրենց՝ Լեհաստանի, Մոլդովայի թէ Տրանսիլվանիոյ մէջ, ուր Հայերը ունեցան իրենց սեփական քաղաքապետներն ու քաղաքական խորհուրդները(72):

Անոնք որ առիթն ունեցած են պրպտելու Արեւելեան Եւրոպայի հայ դաղթօճախներուն դարաւոր կեանքը՝ մանաւանդ անոնց փոխադարձ յարաբերութիւններուն մէջ, դէմ յանդիման եկած են այլազան հանդիսութիւններու, ինչ կը վերաբերի մանաւանդ իրենց ընտանեկան բարեբերուն եւ սովորութիւններուն, որոնք փոխանցուեցան դաղութէ դաղութ: Այնպէս որ պէտք է զարմանալ եթէ Արեւելեան Եւրոպայի հայ դաղութիւնները իրարմէ շատ չեն տարբերի իրենց տօնական ծէսերով, ինչպէս եւ իրենց տարազներով ու ճաշերով(73):

Տեղաշարժերը ձեռագիրներ ալ տեղափոխած են: Քիչ է եղած թիւը ձեռագիրներուն, որոնք ճամբորդած են դաղութէ դաղութ: Ժիշէ Է՝ անոնց բոլորն ալ չեն հասած մեզի: Բաւական է յիշել ձեռագիր մատենաները, զորս Արեւելեան Եւրոպայի հայթաթ-

72) Հ. Միմա Բժշկեան, անդ, էջ 185-184:

Grigore Gollav, Պոթուանի, Եաշի եւ Ռոմանի երկտասարդական ընկերակցութեանց կանոնադրութիւնները, Եաշ, 1896 (առւմ.):

Նոյմիմ, Սուլավայի երկտասարդներու ընկերակցութեան կանոնադրութիւնը, Եաշ, 1902 (առւմ.):

«Արարատ» ամսագիր, 1889, Յուլիս, էջ 389-405:

Տաշեան, Մայր ցուցակ, էջ 923-4:

Գովրիկեան, Հայք յեղիսարեթուպոլիս, Գ., էջ 58-86:

Յ. ձ. Սիրմի, Կարիճվորաց եղբայրութիւնը, «Հայքեմիք Ամսագիր», 1929 Նոյ.:

Նիքեր ձուրմովի, Սիպիկի, Ռումանահայ քեմի եւ մեր սեփական արխիւներէն:

73) Dimitrie Dan, Հայկական սովորութիւններ եւ հաւատալիքներ ծննդեան, հարսնիքի եւ յուղարկաւորութեան, Զերմովից, 1904 (առւմ.):

Տ. Տաւ, Արեւելեան Հայքի Պուլգովինա, Վիեննա, 1891:

Grigore Gollav, Ռոմէն երկիրներու Հայոց աւանդութիւնները, սովորութիւնները եւ հաւատալիքները, Պուրբէշ, 1911 (առւմ.):

թեցին Կիլիկիան եւ Խրիմը, եւ անոնք, որոնք տեղաշարժերու ատեն մէկ դադութէն միւսը անցան: Անոնցմէ մեծ մասին հետքն անգամ չկայ, իսկ աւելի բախտաւորները դացին ապաստան դտնել մեծ հաւաքածուներու մէջ՝ Ձեռագրաց Յուցակներու մէջ յիշատակութեան արժանանալու համար ի վերջոյ:

Հայ տարեգրութեանց մէջ հազուադէպ չէ յիշատակութիւնը այն ձեռագրական դանձերուն, որոնք զոհ են դացած աղէտալի պահերու: Նման պահեր կ'արձանագրեն, օրինակ, Մինաս Թոխաթեցին 1551 տարուան նախճիրներուն ընթացքին Մուղովայի Հայ եկեղեցիներուն մէջ փճացած ձեռագիրներու մասին(74), Սիմէոն Լեհացին, որ իր Նիկիոական Ողբին մէջ կը յիշէ չարաշուք հոգեւորականին մոլեղնութեան զոհուած Հայ ձեռագիրները(75), եւ ռումէն արխիւներու մէջ պահուած փաստաթուղթերը ի մասին այն ձեռագիրներուն, զորս Մուղովայի Հայերը իրենց հետ մէկտեղ Տրանսիլվանիա փախցուցին 1672ին(76):

20

Հայերու զանդուածային տեղափոխութեանց մէջ դեր խաղաց յաճախ ասպնջականութիւնը, զոր անոնք դտան:

Նորեկ Հայերուն հանդէպ սիրալիւ եղաւ մասնաւորապէս Արեւելեան Եւրոպան:

74) Մինաս Թոխաթեցի, *անդ.*, էջ 98-100:

75) Ալիշամ, *Կամենից*, «Վէպ Նիկիոական», էջ 214:

76) Գովրիկեան, *Կերլայի մատենադարանէն մէկ երկու ձեռագիր* («Դրամ-սիլուամիոյ Հայոց մետրապոլիսը», էջ 318-348):

Թ. Ճ. Սիրումի, *Տեղեկագիր 1930-ի Հայ Արուեստի ցուցահանդէսի, Ձեռագրաց բաժին* (ամսիպ):

Սուրէմ Գովամջեան, *Համառոտ ցուցակ Հայերէն ձեռագրաց Գեւու Հայաքաղաքի «Բամբեր Մատենադարանի», 1969, քիւ 9, էջ 433-485:*

Սուրէմ Գովամջեան, *Գեւու Հայաքաղաքը եւ նրա ձեռագրերի ժողովածուն*, «Բամբեր Մատենադարանի», 1962, քիւ 6, էջ 499-531:

Frederic Macler, *Manuscripts arméniens en Transylvanie*, Paris, 1936.

Frederic Macler, *Rapport sur une mission scientifique en Roumanie*, 1930, p. 36-68.

Frederic Macler, *Rapport sur une mission scientifique en Galicie et en Bukovine*, 1927, p. 79-156.

Յրբիմը ձգելով մէկ կողմ, իրարու հարեւան միւս չորս ժողովուրդներն ալ, որոնք Լեհերն ու Ռումէնները, Բուլղարներն ու Հունգարներն էին, իրենց զիրկը սիրով բացին նորեկ Հայերուն(77):

Տեղէ տեղ տարբեր բնոյթ կրեց անշուշտ սոյն ասպնջականութիւնը: Ամէն տեղ ալ բացառիկ դեր խաղաց նպաստը, զոր Հայը կու գար բերել հիւրընկալ երկրին, անոր տնտեսական կեանքին նախ, եւ ապա նաեւ քաղաքական ու մշակութային մարզերու վրայ: Այնպէս որ ասպնջական չորս երկիրներու պատմութիւնը լեցուն է հաւասարապէս հայ անուններով, որոնք լիուլի հատուցած են իրենց ժողովուրդին ընծայուած հիւրընկալութիւնը(78):

21

Անջրպետները, որոնք գոյութիւն ունեցան տեղաշարժերու միջեւ՝ տարբեր խաւեր ստեղծեցին զանազան դաշութներու մէջ: Հին համայնքներուն քով, որոնք վաղուց էին վարժուած տեղական պայմաններուն եւ սովորութիւններուն ու համակեցութիւն ստեղծած էին բնիկ տարրին հետ մէկտեղ, յանկարծ կու գային զետեղուել նորերը, որոնց խորթ էր նոր միջավայրը եւ որոնք, իրենց կարգին, խորթ էին անոր: Երկու տարբեր տեսակի Հայեր մարմին

77) Արեւելեան Եւրոպայի Հայոց գտած ասպնջականութեան եւ վայելած իրաւումներուն մասին տեսնել՝

Ուսումնասիրութիւնք Լեհահայոց դատաստանագրքին,

ա. Պիշօֆ, Լեհահայոց հին իրաւունքը,

բ. Գօլեր, Իրաւունք Հայոց, Քրգւ. Հ. Գրիգոր Գալեմֆեաքեան.

Վիեննա, 1890:

Oswald Balzer, Լվովի Հայոց Դատաստանագրքը Միջին Դարուն, Լվով, 1909 (լեհ.):

Տաշեան, Մայր ցուցակ, էջ 680:

Ալիշան, Կամեհեց, էջ 131:

Յ. ձ. Սիրումի, «Հայրենիք Ամսագիր», 1929, Մայիս:

78) Արեւելեան Եւրոպայի Հայոց մատուցած ծառայութիւններուն եւ տուած զեւթերուն մասին տեսնել՝ Ռումէն հեղինակներէն՝

Նիֆուլայէ Եսքայի, Պ. Փ. Հաշտէուի, Ա. Տ. Քսենոփուի, Կեօրկէ Պալշի, Վլատ Պընքիսանուի, Կեօրկէ Պեզվիֆանիի, Տիմիթրիի Տամի, Կիֆա-Պուտշի, Փ. Փ. Փամայիթէսուի, Միլիսեդիկ Եպս.ի, Թէոտոք Հօլպամի, Կեօրկէ Կիպըմէսուի, Քոմսքամբի ձուրէսուի երկերուն, Լեհ զամալան հեղինակներու եւ Եւրոպացի ճանապարհորդներու մօտ:

կ'առնէին այսպէս քով քովի, իրարու գրեթէ օտար, Հայեր՝ որոնք չէին ալ հասկնար դիրար, եւ յաճախ նաեւ մէկգմէկ չէին հանդուժեր:

Հին ու նոր Հայոս այս ողբերգութիւնը հայ մեծ կեդրոններէն է որ սկսեր էր: Պոլիս ու Թիֆլիս դասական օրինակներն եղեր էին դժբախտ այն պատկերին ուր երկու տեսակ Հայեր հասունցան միշտ կողք կողքի:

Տեղացիներու եւ եկուորներու միջեւ այդ խրամատը զգալի հղաւ Արեւելեան Եւրոպայի մեր գաղութներուն մէջ ալ: Ամէն տեղաշարժի հետ նոր տիպար ու նոր բարբառ կու գար, նոր մտայնութիւն ու կենցաղի նոր ձեւ: Միեւնոյն գաղութին ծոցին մէջ հայութեան տարբեր խաւեր կը ստեղծուէին, ուրիշ կապ չունենալով՝ բայց եթէ իրենց հեռաւոր հասարակաց ծագումը:

Ու միշտ կարիք կ'ըլլար մեծ թիւով տարիներու, որպէսզի նորեկները եւս հաշտուէին նոր կլիմաներուն հետ, ու անոնք եւս սկսէին մոռնալ հեռուն ձգուած իրենց գերեզմանները:

Պէտք կ'ըլլար որ օտարը տակաւ առնէին այս նորեկները, ու ջարդերէն եւ հալածանքներէն փախչողներուն տղաքը շատ աւելի շուտ թօթափին իրենց ծագումին բեռը, ու ամէնայն իրենց պայերէն, շատ աւելի շուտ քան դարեր առաջ եկող կարաւանները՝ որոնք շատ աւելի երկար դիմացուցեր էին իրենց լեզուն ու իրենց աւանդութիւնները:

22

Տասը այն դարերու ընթացքին՝ որ Անիի տարտղնումէն կը թուագրուի, հայ ժողովուրդը յաճախ է այսպէս ձեռք առած տարագրութեան ճամբան, միշտ կարօտնալով լքած օճախը, ետ դառնալու յոյսը միշտ ամուր գրկած սրտին մէջ: Ուր որ գացած է՝ իր հայրենիքէն մասնիկ մը տարած է հետը, միասին է պտտցուցած իր գերեզմաններն ու իր աւանդութիւնները, ու ամէն անգամ որ օտարը փորձած է իր հողին պղծել՝ փարած է անոնց:

Հեշտ չեն անցած այդ տասը դարերը: Օտար երկինքներու տակ մարմին առած հայ կորիզներէն չեն դիմացած շատերը: Ոմանք հեղեղէն քշուած են իսկոյն, ուրիշներ խամրած են տակաւ, այլասերելով կամ անճիտելով: Ու պէտք է եղած որ նոր աղէտ մը գայ, որպէսզի նոր զանգուած մը քշուի հայրենի հողէն ու թարմացնել գայ չքացող հայ գաղութները:

Տասը դար ամբողջ՝ Հայն աշխատեց բաժնուած է իր հայրենիքէն: Ամէն աղէտի հետ նոր զանգուած մը լքած է իր հայրենի օճախը՝ ապաստան որոնելով բոլոր երկինքներու տակ, սպառելու համար ինքն ալ իր կարգին օտար գրկի մէջ:

Մեր օրերը տեսան նաեւ կարաւաններու տուն վերադարձը: Նման պահ մը Օսմանեան Հուրրիէթը ստեղծեց էր 1908 թ.ին: Պարուսիկ աղատութիւնը, զոր Երիտասարդ Թուրքերը պարզեցին Թուրքիոյ ժողովուրդներուն՝ շատ Հայեր վերադարձուցեր էր օտար ափերէն, զանոնք եւս յանձնելու համար, աւա՛ղ, Մեծ Եղեռնի ճանկերուն:

Պէտք էր որ տասը տարի ետք դարերը արթնային իրենց գերեզմանէն, ու հայ ժողովուրդը սկսէր հայրենիք ստեղծել իրեն, իր պապերուն իսկ հողին վրայ, որպէսզի իր գիրկը բանար պանդուխտ իր զաւակներուն:

Հայ սփիւռքն էր որ կը սկսէր տուն վերադառնալ:

ARMENIAN DEPARTATIONS ON THE MAP OF EASTERN EUROPE

H.G. SIROUNI

In the 11th century, after the fall of Ani, Armenians begin to migrate in all directions. A considerable number are settled in Astrakhan, thence to move and establish abode in Crimea in 1299. Here they enhance trade and create a rich cultural heritage. It is Crimea that gives birth to the Armenian settlements in Eastern Europe, even though sprinklings of Armenians have existed here ever since the 10th century. During subsequent centuries, Armenians keep migrating to Eastern Europe for trade purposes and for such reasons as the forced deportations decreed by Mohammed Fatih, Bayazid II and Shah Abbas, the conquest of the Jalalis, the Turko-Polish war, the Turko-Russian war, and the Ottoman Constitution of 1908. With the increase of the Armenian population, displacements take place in the Polish, Hungarian, Bulgarian and Rumanian settlements. Armenians have widely contributed to the advancement of the social, economic, and political life in these countries, keeping, meanwhile, their own national and religious customs unaltered down to the present time. The blessings, however, have not been unmixed. They have had their domestic problems, the most serious of which have been the troubles entailed by the propagandizing activities of the Roman Catholic Church.